

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

9692

Young & Keeler  
Works of Art  
New Haven



1910



Ա. ԿՈՒԿՈՒՆԵԱՆ.

# ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐԱ ԱՌԵՍԼԻՆԱԽ

С. Кукуніанъ.

ПОСЛЕДНИЕ ДНИ НА САХАЛИНѢ.

ՏՊԱՐԱՆ

Ա. Բր. Շահբաղեանի, Բագու.

Тип. С. Т. Шахбагова, Баку.

1910

92

4-81

9592

94(47.92s)

4-92

5/11 SEP 20  
AUG 2001

Ա. ԿՈՒԿՈՒՆԵԱՆՆ.



# ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐՄ ԱԾԽԱԼԻՆՈՒՄ

81681

С. Кукуніанъ.

ПОСЛЕДНИЕ ДНИ НА САХАЛИНІ

7/11/1922



Ա. Թահրաղեամբ, Բագր.

Тип. С. Т. Шахбагова, Баку.

1910

29 MAY 2013

100

1930 01000  
1930 01000

1930 01000

1930 01000




1930 01000 0  
1930





Վ. ԿՈՒԿՈՒՆԵԱՆ  
1893.



Վ. ԿՈՒԿՈՒՆԵԱՆ  
1907.

Դուք, որ ամեն տեսակ փորձանենք,  
մըրկայոյզ վտանգներ արհամարելով, որ  
արհաւիրքներին ձեր կուրծքը դեմ տուած՝  
ուահվիրաները եղաք բազմատանջ տան-  
կահայի ազատագրութեան զործին, աւելի  
քանի բան ընծայաբերել չկարողանալով,  
ձեր անընդ անուններին, ձեր անմահ  
յիշատակին այս գրեյլին եմ նուիրում, որ  
նոյնպէս ծնուեց տաճանեների բովից:



ունիս առաջ առաջ առաջ առաջ  
մ պարտական ազգակայ պատրիարք  
հայութի առաջ առ Ավագութիւն  
առ առաջնորդ առաջ առաջնորդ  
առաջնորդ առաջնորդ առ առաջ  
առաջնորդ առ առաջնորդ առ  
առ առաջ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ



Իւրաքանչիւր ծանօթս առաջին իսկ  
հանդիպումից՝ զարմանում է, թէ ինչու  
ես իմ յիշատակարանս չունիմ, ինչու Սա-  
խալինում անցկացրած տարիներս չեմ  
նկարագրել հենց այստեղ։ Ունենալ այդ-  
պիսի հարուստ, վերին աստիճանի հետա-  
բրիր նիւթ ու նրան չդնել հասարակու-  
թեան առաջ՝ յանցանք է։

Այդպէս են ասում բոլոր ընկերներս  
ու ծանօթներս, և նրանց այդ յանդիմա-  
նանքը ես բնական ու իրաւացի եմ գտնում։

Իսկապէս, Դանտէն երևակայեց գժոխ-  
քի տանջանքներն, ու երևակայութեամք՝

Իւր հոչակաւոր «Դժոխքը» հրաշակերտեց.  
իսկ ես, որ ոչ թէ երևակայել, այլ  
տասնուվեց անծայր տարիներ իմ կաշուիս  
վրայ եմ զգացել ու կաթ-կաթ քամել  
դժոխքի այն իսկական թոյնն ու գառնու-  
թիւնը, որ Դանտէի հսկայ երևակայու-  
թիւնն անգամ չէր իշխել յայտնագործելու,  
ես ինչու չպէտք է աղաղակէի ի լուր  
աշխարհի, թէ ինչ է 16 տարուայ տա-  
ժանակրութիւնը, թէ ինչ է Սախալինը:  
Բայց... Սախալինում ում համար  
զրէի, ումնկարագրէի տաժանակրի կեան-  
քը, ում կարող էի հետաքրքրել... Տա-  
ժանակիրներին, որ հէնց իրանք են մար-  
մացած նկարագրութիւնը:

Ի՞նձ համար, իմ սեպհական բաւակա-  
նութեան համար...

Մի մարդ, որի կեանքը շրջապա-  
տողների համար աւելի պակաս գին ունի,  
քան մի պատուստած փալաս, որով իրենց  
ոտները կարող են փաթթել, մի մարդ,  
որ միանգամ ընդ միշտ յոյսը կորցրել

է սքանչելի ազատ անունը վայելելու,  
մի մարդ, որ չի իմանում, թէ Սախա-  
լինի ափերից դէնն ինչ է կատարուում,  
որ չի իմանում, թէ՝ տարիների ըն-  
թացքում շղթաները պէտք է իւր ոսկոր-  
ներին մաշեն, թէ ոսկորները շղթանե-  
րին,—այդպիսի մարդը կարող է, սիրտ  
կ'ունենայ գրիչ վերցնել ու ասել, թէ՝  
եկ գրականութեամբ պարապեմ:

Պատահել է... և այդ ոչ թէ մենակ  
ինձ, այլ և շատ ու իսկական զրագէտ-  
ների հետ. վերցրել ենք, զրել մի երես,  
տաւը, քսան, հարիւր երես, ապա...  
ամենայն հանգստութեամբ կամ վառել,  
կամ պատուել:

Իսկ այժմ, քանի որ Սախալինում  
չեմ, քանի որ տաժանակրի շղթաներն էլ  
չեն զընգում թերիս, երկու-երեք տա-  
րուայ ազատութիւնն եմ վայելում, և,  
թէ այժմ էլ «տաժանակիր» ու «Սա-  
խալին» անունները վերյիշելուց սիրտս  
կծկում է ցաւից ու զղերս ցնցւում,

այնուամենայնիւ, իմ տաժանակը ութեանս  
մի երկու երեսն եմ տալիս, և այդ  
աւելի հեշտ է, որովհետեւ իմ ազա-  
տուելու պատմոթիւնն է դա:



Լաւ չեմ յիշում, կարծեմ 1898-99  
թուականին էր, որ Սախալինի արևելքան  
ափերում գտնուող Ալէքսանդրօվսկիյ  
պօստում բնակչութիւն էին հաստատել  
քսանաչափ եապօնացիներ, որոնք զբաղ-  
ւում էին ձկնորսութեամբ և զանազան  
մանր առևտուրով. նրանք, իբրև վաճառա-  
կաններ, կղզու բոլոր աչքի ընկնող տե-  
ղերն այցելում էին առևտրական գործե-  
րով, այդ պատճառով էլ ուսւ պաշտօ-  
նեանների ու վաճառականների հետ մշտա-  
կան յարաբերութեանց մէջ էին գտնւում:  
Սակայն ուսւածերէն չիմանալլ շատ անդամ  
նրանց գործերին խոչընդուռ էր հանդի~

սանում, ուստի նրանք դիմում են ծանօթ ուս վաճառականներին ու խնդրում, որպէսզի մի ուսուցիչ ճարեն իրենց համար:

Այդ ժամանակները ես արդէն «ազատ բանառում» էի գտնւում, և դէպքն այնպէս բերաւ, որ վաճառականներն ինձ առաջարկեցին սովորեցնել եազօնացիներին ուսուց լեզուն, իսկ նրանց ընտրութիւնն ինձ վրայ էր կանգ առել նրա համար, որ մինչեւ այդ էլ Ալեքսանդրօվսկիյ պօստում ես էի զանազան պաշտօնեաների երեխաններին ձրիաբար սովորեցնողը:

Ինչ առել կ'ուզի, որ ես ուրախութեամբ յանձն առայ առաջարկուած պաշտօնն, ամսական մի չնչին վարձատրութեամբ, այն էլ, զլսաւորապէս՝ մթերքներով. բայց ինչքան էլ չնչին լինէր այդ վարձատրութիւնը, այնուամենայիւ մեծ բան էր ինձ համար, որ արդէն երեխանների տէր էի, և ձուկն էր մեր ապրուստի ամենագլխաւոր միջոցն

ու գետնախնձորը, որ խրճթիս մօտ էի ցանում:

Ես սկսեցի զբաղուել աշակերտներիս հետ. նրանք բաւական ընդունակ մարդիկ դուրս եկան, շուտով ըմբռնում էին գամն ու, առհասարակ, ինաելիդէնտ, կրթուած մարդու տպաւորութիւն էին թողնում ինձ վրայ: Եւ քանի անցնում էր ժամանակը, նոյնքան էլ ես ինձ միսիթարուած էի զգում, տեսնելով, որ նրանք ինձ վրայ բարձրէց չեն նայում, որ նրանք դէպի ինձ վերաբերում են ոչ այնպէս, ինչպէս սովորաբար Սախալինումն է ընդունուած՝ վերաբերուել դէպի կատարելապէս անպաշտպան, թշուառ, իրաւագուրկ տաժանակիրը, ոչ, նրանք ինձ վրայ նայում էին, ինչպէս իրենց հաւասար մի մարդու: Իսկ այդ որպիսի հոգեկան բաւականութիւն, սփոփանք էր պատճառում ինձ. նրանց հետ եղած ժամանակս միայն գտնում էի, որ մարդկային արժանապատւութիւնս յարգւում

է, որ ես, տաժանկիր լինելով հանդերձ՝  
մարդ էլ եմ... մինչդեռ այդտեղ թէ  
շղթայակիրների բանտում և թէ դուրսը՝  
երկար տարիների ընթացքում միայն ար-  
համարհանք և ոտնահարումն էի տեսել  
այն բոլորի, ինչ որ մարդուս ամենաթան-  
կագին գանձն է:

Պէտք է խոստովանել, որ եապօնացի  
աշակերտներս առանձին ուշադրութիւն  
էին դարձնում և մի տեսակ յարգանքով  
վերաբերում դէպի այն տաժանակիրները,  
որոնք Սախալին էին քշուել քաղաքական  
յանցանքների համար, մասնաւանդ՝ եթէ  
նրանք ներկայացուցիչներ էին Ռուսաս-  
տանում գտնուող մանր ազգութիւնների։  
Աշակերտներիցս ոմանք խիստ հետաքրքր-  
ուում էին իմ անցեալով և պատժուելուս  
շարժառիթներն էին հարցնում ամենայն  
մանրամասնութիւններով։ Ես նրանց պատ-  
ճեցի, թէ ինչ պայմանների մէջ էր  
գտնուում Տաճկա-Հայաստանը Տաճիկ կա-  
ռավարութեան ձեռքում և թէ ինչպէս

1890 թուին 120 հոգուց բաղկացած մի  
խմբով անցայ Տաճկաստան, հայկական  
ազատագրութիւնը փայփայելով. պատմե-  
ցի մեր ընդհարումները Ռուս-Տաճկական  
սահմանից գէնը քրդերի ու տաճիկ զօր-  
քերի հետ, թէ ինչպէս նորից ընկնելով  
Ռուսական սահմանը՝ պաշարուեցի ոռւ-  
սական զօրքերով, և, որովհետև Ռուս  
կառավարութեան դէմ ոչինչ չունէինք,  
առանց դիմադրութեան անձնատուր  
եղանք, մի մասն ազատուեց փախուստով  
նախ քան շրջապատուելիս, իսկ ձերբա-  
կալուածներիս դատեցին, դատապարտե-  
ցին և քսանուվեց հոգու տաժանակրու-  
թեան քշեցին զանազան, բայց երկար  
ժամանակով, իսկ ինձ քսան տարով։

Նրանք ինձ լուսմ էին խորին ուշա-  
դրութեամբ և իրենց դիտողութիւններն  
անում։ Իմ պատմածներիս համառօտա-  
գրութիւնը նրանք լոյս ընծայեցին եա-  
պօնական թերթերում։ Այնուհետև արդէն  
ես էի բազմատեսակ տեղեկութիւններ

տալիս իմ ժամանակուայ հայկական իրականութեան, նրա քաղաքական և անտեսական գրութեան մասին, լակ նրանք այդ տեղեկութիւնները պարբերաբ տեղաւորում էին իրենց թերթերում: Բայց, դժբախտաբար, նրանց որևէ թարմ տեղեկութիւն տալ չէի կարող, որովհետեւ տարիների ընթացքում հայրենիքից ոչ մի լուր չունէի. թէ ես և թէ առհասարակ միւս տաժանկիրներն արտաքին աշխարհից միանգամայն կտրուած էինք:

Իմ տաժանակրութեանս երկար ու ձիգ 16 տարիների ընթացքում ես միայն 1896 թ. մի նամակ ստացայ իմ նախկին ընկեր Թ. Զ...ից, և այդ նամակն էր, որ ինձ հոգեկան ոյժ մատակարարեց՝ դառնութիւններս համբերութեամբ տանելու: Ինչպիսի փայփայանքով էի նայում ես այդ թղթի կտորին. ամեն, ամեն ինչ ես դտայ այնտեղ, որովհետեւ հայրենիքիցս էր գալիս, որովհետեւ հայրենի լեզով էր

գրուած, և եկել էր ինձ աւետելու, որ այն գաղափարը, որի համար ես քսանամեայ տաժանակրի շղթաներին էի արժանացել, այլ ևս վերացական խնդիր չէ, այլ՝ մարմնացել է և մօտենում է իրականանալուն: Ահա մի կտոր այն նամակից, որ մինչև այժմ էլ պահում եմ մօտս, իբրև մի սրբութիւն:

«Սիրելի՛ Սարգիս, . . . . ին քո գրած նամակդ ստացայ ուղիղ չորս ամսից յետոյ: Սրտի յուզմունքով և արտասուքը աչքերիս կարգացի քո նամակդ. համբուրում եմ քեզ, սիրելի՛ Սարգիս, և սկզբում եմ իմ կրծքիս քո վշտահար գլուխը: Այն միտքը՝ որ դու զոհ եղար գաղափարին և որ այդ զոհը իզուր տեղը չէր, թող միսիթարի քեզ և ոյժ ու համբերութիւն տայ դիմանալ այժմեան չարչարանքին: Բո նամակն ես արդէն ուղարկեցի ուր հարկն է.... կ'կարդան շատերը և կ'յանձնեն Ա. Զ...ին. . . . .

«Զգիտեմ, արդեօք որկիցէ լուր հաս-

նում է քեզ լոյս աշխարհից թէ ոչ. մի տարի է ահա, որ հայկական հարցը նորից դարթել է և այս անգամ այնպիսի ուժով, որ այլ ևս քնացնել անկարելի է: Հայկական հարցը դարձել է ընդհանուր միջազգային հարց. բոլոր եւրոպական տէրութիւնները ձայն են բարձրացրել և պահանջում են արտօնութիւններ հայերի համար. Տաճկաստանի բոլոր հայաբնակ քաղաքներում տիրում է ընդհանուր կոտորած. ոտի են վեր կացել Կ.Պօլիսը, Տիգրանակերտը, Սասունը, Երզրումը, Տրապիզոնը և Զէյթունը: Աշխարհի բուրր լրագիրները ահա՛ մի քանի ամիս է, որ շարունակ զբաղուած են հայկական հարցով և այդ շարժումների նկարազրութիւններով: Բոլոր նշաններից երեսում է, որ ազատութեան արշալոյսը արդէն ծագել է և մօտեցել է բռպէն, երբ որ մեր բազմաչարչար ազգը պէտք է ազատուի թուրքերի դարաւոր ճնշումից: Առվլթանը արդէն մի իրադէ է հրատարակել, որով

խոստանում է զանազան բարենորոգութիւններ, բայց հայերը և օտար պետութիւնները արդէն այնքան առաջ են գնացել, որ չեն բաւականանում այդ պաշտօնական խոստումներով և շարժումը օրէցօր փոխանակ նուազելու աւելի և աւելի սաստկանում է: Այդ հսկայական շարժման առաջ մարդ ակամայ մոռանում է տարակերութեան և աքսորի գառնութիւնները . . . . .  
«Հայ պատմութեան ապագայ պատմագիրը անշուշտ չի մոռանալ, որ այդ շարժման մէջ դու ևս անմասնակից չես եղել: . . . . .

«Սխմում եմ ձեռքդ և համբուրում քեզ՝ քո Թ. Զ.»:

Աշակերտաններիս հետ պարապելով ոսերէնից, ես էլ իմ կողմից աշխատում եի եապօններէն սովորել, և, որոշ ժամանակից յետոյ, այդ լեզուին բաւականաշափ ծանօթացայ. այդ հանգամանքը նոյնպէս դրդապատճառ էր, որ մենք փո-

խաղարձաբար միմեանց աւելի մօտենայինք: Այդպիսով իմ դրութիւնս, իբրև տաժանակը, բաւականին փոխուած էր դէպի լաւը, եթէ, առհասարակ՝ «լաւ դրութիւն» խօսքի հասկացողութիւնը կայ Սախալինում, բայց և այնպէս, համեմատած ուրիշ շատ իմ բախտակիցներիս հետ, ես տանելի օրեր էի անց կացնում, Սախալինեան մտքով, իհարկէ:

Մի այլ բարեբախտ դիպուած ևս եկաւ իմ կացութիւնս էլ աւելի մեղմելու: Կղզու զինուորական նահանգապետը, գեներալ Լեապունով, իւր մի ըէվիպիայի ժամանակ՝ 1901 թ., կառավարական տպարանում ահազին զեղծումներ ու անփութութիւն գտաւ: Տպարանը, որ քսան տարուայ գոյութիւն ունէր, չնորհիւ այն հանգամանքի, որ շարունակ գործին անտեղեակ մարդկանց ձեռքում էր գտնուած, և որ այդ մարդիկ, բացի անտեղեակութիւնից, բարեխիղճ էլ չէին գտնուում դէպի իրենց յանձնած պաշ-

տօնը, — քանի գնում, վնասներ էր ցոյց տալիս: Այդ փաստը բաւական վրդովեցրեց գեներալին, և նա, դառնալով իւր դիւանատան կառավարչին, հարցնում է, թէ չկմյ արդեօք տաժանակիրների մէջ մի մարդ, որ ծանօթ լինէր տպարանական գործին: Դիւանատան կառավարիչը, որի երեխաներին ես երկար ժամանակ սովորեցնում էի, իհարկէ, ձրիաբար, պատասխանում է, որ կայ այդպիսի մէկը:

— Ո՞վ է դա, — հարցնում է գեներալը:

— Տաժանակիր կուկունեանը, — պատասխանում են նրան:

— Կանչէլ նրան ինձ մօտ, — հրամայում է գեներալը:

Ես, իսկապէս, ծանօթ էի տպարանական գործին: Պետերբուրգ ուսանող եղած ժամանակս, երբ ուսանողական մի խմբակի հետ «Բուլզար աւազակապետ», «Տանչօ», «Հունգարիան» գործերն էինք



հրատարակում, դեռ այն ժամանակուանից բաւականին ծանօթ էի այդ գործին։  
Չդիտեմ, ինչով էի զբաղուած, երբ եկան ու ասացին, որ գեներալը կանչում է։  
Ես փորձով գիտէի, որ, երբ ինձ յանկարծ կանչում էին որևէ բարձրաստիճան պաշտօնեայի մօտ, ապա, հեռուից եկած ինչինչ հրահանգների համաձայն, հակողութիւնն ինձ վրայ աւելի ևս խստացնում էին, հոգեկան ու ֆիզիքական տանջանքներս աւելացնելով։ Երբեմն նոյն իսկ շղթաներով էր վերջանում գործը, երեխ ենթադրելով, որ ես կարող եմ փախչել։ Իսկ հեռուից եկած հրահանգներն անսիջական կապ ունէին Ռուսաստանի ներքին կեանքի, մանաւանդ հայկական խնդրի հետ։ Կովկասի կամ Տաճկաստանի հայերի այս կամ այն բողոքն անդրադառնում էր իմ շղթաներիս վրայ։ Այդ էր պատճառը, որ գեներալի ինձ իւր մօտ կանչելը խրճիթիս մէջ անհանգստութիւն դցեց։ Կիսա սկսեց սրանեղուել,

բայց ես, որքան էլ ներսս փոթորկում էր, հանգստացրի, ասելով, որ երեխ որևէ ստուգման գործ կայ։ Ասացի ու ճանապարհուեցի դէպի գեներալի դիւանատունը։ Երբ գեներալին զեկուցում տուին իմ մասին, նա դարձաւ դէպի ինձ։

— Դուք էք կուկունեանը, — ասաց նա, ինձ հետ «զուք»-ով խօսելով։ Մի վերաբերմունք, որ շատ հազուագիւտ է Սախալինում և մի առանձին շնորհ է մեծաւորի կողմից՝ դէպի մի իրաւազուրկ տաժանակիր։

— Այո, ես եմ, ձերդ գերազանցութիւն, — պատասխանեցի նրան, անհամբեր սպասելով, թէ՝ ինչ նորութիւն պէտք է ասէ։

— Ինձ յայտնեցին, որ դուք ծանօթ էք տպարանական գործին, — քիչ կանգ առնելուց յետոյ, ասաց նա։

— Այո, բաւականաշափ ծանօթ եմ։

— Կարո՞ղ էք տպարանական գործերը տանել։

— Կարող եմ:  
 — Այդ դէպքումն ես ձեզ նշանաւկում եմ կառավարական տպարանի կառավարիչ. աշխատեցէք գործերը կանոնաւորել, որ այնքան էլ նախանձելի չեն, — ասաց նա, ապա, դառնալով իմ անմիջական իշխանաւորներին, պատուիրեց յանձնել ինձ նոր պաշտօնս:

Գեներալի մօտ կանչուել, տաժանակիր լինել և յանկարծ, պատժուելու փոխարէն, դեռ պատասխանատու պաշտօն ստանալ, երեակայել չէի կարող: Կարծես թէ տասնեակ տարիներով Սահալինում անցկացրած դժոխային կեանքս իրա տանջանքների վերջակէտն էր դնում, և իմ ջղային — գրգռուած դրութիւնս կամաց-կամաց մեղմանալու կէտին էր յանդում:

Պետք է խոստովանել, որ ես իմ գործս բաւական հմտութեամբ տարայ, և, առանց չափազանցնելու եմ ասում, տպարանն իմ կառավարչութեան առաջին

տարին աւելի՝ արդիւնք տուաւ, քան թէ իւր գոյութեան ամբողջ քսան տարուայ ժամանակաշրջանում:

Նոր պաշտօնումս մի տարի անց էի կացրել, երբ գեներալ կեապունովը իւր մի նոր շրջագայութեան և ըէվիզիայի ժամանակ նորից հետաքրքրուեց տպարանով, քննեց մի տարուայ ամբողջ գործն ու գտաւ, ինչպէս ասացի, որ տապարանը ոչ թէ ֆաս է արել ըստ սովորականին, այլ և մի քանի հազար ըուբլու արդիւնք է տուել: Այդ բոլորը տեսնելուց յետոյ, գեներալը իւր գոհունակութիւնը յայտնեց ինձ, որ այդքան բարեխղճօրէն ու իմացականութեամբ եմ տարել գործս, ապա դարձաւ դիւանատան կառավարչին:

— Իսկ ինչքան ոսմիկ է ստանում կուկունեանը:

— Ոչինչ, ձերք գերազանցութիւն, — պատասխանեց դիւանատան կառավարիչն, աւելացնելով. — Կուկունեանը տաժանակիր է, իսկ օրէնքով՝ տաժանա-

Կիրն իրեն յանձնած բոլոր գործերը  
պէտք է ձրի կատարէ:

Այդ օրէնքը ես էլ գիտեմ,—  
վրայ բերաւ գեներալը, —բայց այն ևս  
գիտեմ, որ տաժանակիր կուկունեանն  
աւելի լաւ է պաշտպանել նորին կայսե-  
քական Մեծութեան շահերը, քան թէ  
նրա հչ տաժանակիր, ոռծիկ ստացող  
պաշտօնեաները... Նշանակել կուկունեա-  
նին ամսական երեսուն ըուբլի:

Տաժանակիր՝ և 30 ըուբլի ոռծիկ  
Սախալինում՝ դա մի հազուագիւտ բախ-  
տաւորութիւն է. բայց այս անգամ ինձ  
30 ըուբլին չէր հետաքրքրողը, այլ այն,  
որ ես դըանով մի քայլ էլ առաջ անցայ  
իմ մարդկային իրաւունքներիս մէջ: Գե-  
ներալի քաղաքավարի վարմունքը, նրա  
յայտնած շնորհակալութիւնը, 30 ըուբլի  
ոռծիկս և ինձ հետ «դուք»-ով խօսելը մի  
կատարեալ յեղափոխութիւն մտցրին ինձ  
շըջապատող բոլոր պաշտօնեաների մէջ,  
և նրանք էլ, հետևելով իրենց մեծին,

աշխատում էին քաղաքավարի լինել հետո:  
Ահա այդ հանգամանքն էր պատճառը, որ  
ես ինձ որոշ չափով միսիթարուած էի  
գտնում, թէկ շատ անգամ էի նկատում,  
թէ որքան ծանր է Սախալինեան մթնո-  
լորտին սովորած պաշտօնեաների համար՝  
մի որևէ տաժանակիրի հետ մարդավայել  
վարուելը:

Օրինակ, նրանցից ոմանք, գեներալի  
վարմունքից խրախուսուած, ցանկանում  
էին ինձ հետ բարեկել, ձեռք տալ. բայց  
դա հեշտ բան է, իսկի կարելի է, որ  
Սախալինեան ամենաչնչին աստիճանա-  
ւորն անգամ իւր ձեռքը կպցնի տաժա-  
նակիր ձեռքին... և նրանք վախճախելով,  
զգուշութեամբ իրենց ձեռքն էին մեկ-  
նում ինձ, բարեկում, ու արագութեամբ  
յետ քաշում, կարծես մի սոսկալի վտան-  
գից ազատուելով, որ այդ «սրբապղծու-  
թիւնը» ոչ ոք չտեսաւ:

Եւ ամբողջ ցաւը նրանում էր, որ  
ես մերժել, երեսս շուր տալ այդ տեսակ

Քարեից՝ չէի կարող... ի՞նչ անէի, պայմաններս այդպէս էին... բայց և այնպէս, համեմատած այդտեղ անցկացրած նախկին տարիներիս հետ, ներկայ կացութիւնս անպայման գերադասելի էր:

## II

«Նախկին տարիներն», ասում եմ ու սոսկում ամբողջ մարմնով, իմ ամբողջ էութեամբ, երբ յիշողութեանս մէջ վերակենդաննում են այն զարհուրելի օրերը։ Սախալինեան դժոխքի մասին գաղտափար կազմելու համար, հարկաւոր է ապրել այն դժոխքում, զգալ իրա կաշուի վրայ բոլոր տաճանքները. թէ չէ, ոչ մի նկարագրութիւն, ոչ մի զրիչ պատկերացնել Սախալինն՝ անկարող է։ Վերադիցս յետոյ ես կարգացի Ա. Զեխօվի, Դօրօշկիչի գրուածքները Սախալինի մասին, բայց այնտեղ ես միայն ամբողջի կմախքը գտայ, որովհետեւ, կրկնում եմ,

Սախալինը հասկանալու համար՝ անձնականի վրայ զգալ է պէտք, առանելին ու լսելը շատ քիչ է։

Իստելիգէնտ, հասարակական գործիչ, բժիշկ, փաստաբան կամ ինժեներ, այս կամ այն պատճառով դատապարտւում և ընկնում է Սախալին. այնուհետև նա այլ ևս ինտելիգէնտ, բժիշկ կամ փաստաբան չէ, նա... նոյն իսկ մարդ չէ. նա միայն տաժանակիր է, մի շնչաւոր էակ, որին իրաւունք է տրւում զգալ բայց չբողոքել մտածել, բայց չարտայացել. մի էակ, որ իրաւունք ունի աշխատելու քարածուիր հանքերում, գերաններ քաշել, քանի շունչ և շարժուելու հնարաւորութիւն ունի. մի իրաւագուրկ դժբախտ, որ ամեն բոպէ կարող է ծեծուիլ ճիպուներով, շղթաների զարկուիլ, փոքրիկ սայլակների շղթայուիլ, մի խօսքով՝ ամեն տեսակ պատուհանների ենթարկուիլ, սակայն առանց բողոքելու, առանց նոյն իսկ արտնջալու մասին մտածելու, որովհետեւ

բողոքն ու տրանջալը միայն դառնութիւններն են կրկնապատկում, եռապատկում:

Երանելի են անասունները. ափսոս չեն կենդանիները. նրանց խնամում, պահում, պահպանում են. իսկ տաժանակրին, մանաւանդ եթէ նա իւր անցեալն ունի, կրթուած, զարգացած մարդ է։ Ամենաստորին պաշտօնեաներից շատերը մի առանձին չարութեամբ են հետամտում այդպիսիներին, նրանց ինքնասիրութեան բեկորները ցեխի մէջ տրորելու, նրանց ծաղրելու, նուաստացնելու համար։ Եթէ մեծաւորներիցդ մէկն ու մէկին անցնելուց շաեսար ու գդակ չվերցրիր, գլուխ չխոնարհեցիր, պատից չես խուսափի, թէկուզ մի հարիւր անգամ նրանից բարձր եղած լինիս թէ զիտութեամբ, թէ հասարակական գիրքով. գու իրաւունք չունիս, գու պարտաւոր ես տեսնելու։ Եւ քանի՛քանիսներն են ծեծուել, ճիպոտների հարուածներ

կերել միմիայն այդ տարաբախտ գդակային խնդրի պատճառով։ Այդ բոլորի վրայ եթէ աւելացնենք և տաժանակիր աշխատանքներն, այն ժամանակ հասկանալի կը լինի, թէ ինչ էր մեր գրութիւնը։

Սախալինում օրէնք կար, որ կառավարութեան պէտքերի համար կտրուելիք գերանները տաժանակիրները պէտք է կարէին, տեղ հասցնէին. այդ գործը յանձնում էին տաժանակիրների մի խմբակի, հինգ հոգուց բաղկացած, ու պատուիրում, թէ՝ մօտակայ անտառից պէտք է կտրել այս ինչ հաստութեամբ, այս ինչ երկարութեամբ գերան և հասցնել որոշուած տեղը։ Վաթսուն աստիճան սառնամանիքի միջից հինգ հոգով ճանապարհում էինք անտառ։ Սախալինում մի հիւանդութիւն կայ, որ սոսկալի ցրտերում անուշ քուն է բերում մարդուս վրայ. ով քնեց, նա կորած է. սառչում է։ Երբ մենք էլ ուղևորուում էինք անտառ, անտանելի ցրտի մէջ երբեմն այդ քաղցր քունը

բոնում էր մէկն ու մէկին, և ցանկանում ես պառկել ձիւնի մէջ, քնել, անվերջ քնել, այնքան ուժեղ և քաղցր էր լինում քնելու տեսչը. սակայն այդ քունը մահացու է: Եւ ներսդ սկսում է մի սարսափելի կռիւ. քո ամբողջ զգայարանքներդ կանչում են.—պառկիր, քնիր,—և կարծես մի անտեսանելի երկաթէ բազուկ զլուխդ բռնած՝ խոնարհում է դէպի ձիւնածածկ գետինը. սակայն միւնոյն ժամանակ գործում է և ուղեղդ. նա հրամայում է.—չքնես, հալածիր քունդ, թէ չէ մեռած ես:—Եւ լաւ է, եթէ ընկերներդ նկատում են այդ, վրադ թափում, ձիւնով հարում վիզդ ու ճակատդ, բշաբշում ու քունդ փախցնում, կամ, աւելի ձիշն ասած՝ մահից ազատում:

Ահա այդ գրութեամբ համում ենք անտառին, սառցի լուլաները կախկառուած մեր մազ ու միրուքից, կարում ահագին գերանը, ճիւղերը կտրտում, ու հինգ հոգով լծուած՝ ձեան երեսով սահեցնում

դէպի որոշուած տեղը: Ինչեր չէինք քաշում ճանապարհին, քանի անզամ զլորում, նորից վեր կենում, նորից զլորում, ապա նորից փէտացած ձեռներով կաչում գերանին, տնքում, հառաչում և ուժերի մնացած բեկորները լարելով նորից ձգնում ու ձգում, մինչև որ 60° սառնամանիքում քրանողող եղած, հոգեհան գարձած, ջարգուած, փշրուած, բերում ու տեղ էինք հասցնում:

Բայց եթէ գերանն ընդունող պաշտօնեայի քէֆը տեղը չէ, կամ բարկացած է ձեզնից մէկն ու մէկի վրայ, կամ՝ հէնց այնպէս, վայրենի քմահաճոյք ունի և ուղում է իւր ամենակարողութիւնը ցոյց տալ:

— «Բրակ»,—կանչում է նա ամենայն սառնաբառութեամբ, տանջանքներիցդ ծնուած ու մարմնացած գերանը մերժելով:

Լուռ, մունջ, անբարբառ մենք նորից պէտք է զնայինք նոյն ճանապարհով,

տանջանքի բովից մի աւելորդ անգամ ևս  
անցնելու. և ատելութեան թոյնն էր  
միայն, որ մեր սրտում բորբոքուելով՝  
մի քիչ հանգստացնում էր մեզ: Այդ էլ  
մի բան էր. գոնէ ատել կարող էինք:

Երբեմն պատահում էր, որ մեր  
անլուր տանջանքների, գերանը քաշելու  
ժամանակ, օգնութեան էին համում  
դիւղացիութեան իրաւունք ստացած նախ-  
կին տաժանակիրներն ու մեր բեռը  
թեթևացնում: Այդպէս է. «թշուառն է  
թշուառին կարեկից». չէ՞ որ նրանք դեռ  
երեկ էին նոյն այդ թշուառութեան ծու-  
փում լող տալիս. նրանք համարնում էին  
մեզ, և միայն նրանք էին մեզ խղճացողը,  
օգնութեան ձեռք մեկնողը:

Ամառները, երբ եղանակը տաք, և  
ցրտից պատսպարուելու պէտքը չէր լի-  
նում, շատ անգամ էր պատահում, որ  
մենք մնում էինք անտառներում, մեր  
աշխատանքի տեղը, թեթև հսկողութեան  
տակ: Տեղական վարչութիւնը շատ լաւ

գիտէր, որ, միկնոյն է, ինչքան էլ  
հսկողութիւնը թոյլ լինի, աշխատանքի  
տեղից փախչող չպիտի լինի. և, իսկապէս,  
ով պէտք է փախչէր, ուր պէտք է փախ-  
չէր. չորս կողմը ծով, չորս կողմը մահ.  
չէ՞ որ չորս կողմը թափառական տաժա-  
նակիրներն էին վիստում, որ մի կտոր  
կաշուի կամ երկու կոպէկի համար պատ-  
րաստ էին գլուխդ փայտով կամ սրած  
երկաթէ կտորով փշրելու:

Փախչելու փորձեր, այս, լինում էին,  
բայց այդ փորձերն անում էին նրանք,  
որ ինքնասպանութիւն գործելու քաջու-  
թիւն չէին ունենում, սակայն դիմում  
էին դէպի անխուսափելի կորուստ: Թէ  
չէ՝ կարելի է երևակայել. նստել մի կտոր  
գերանի վրայ, առանց հացի, առանց ջրի  
ընկնել անվերջ ովկիանոսի երեսը, իրեն  
յանձնել ավեներին ու յուսալ՝ թէ ափ  
պէտք է դուրս գայ. միայն վերջին ծայր  
յուսահատութեան հասածներն էին այդ  
խելագար քայլին դիմում՝ գոնէ Սախալինի

մթնոլորտից դուրս մեռնելու։ Եւ եթէ նրանք կուլ էին գնում ովկիանոսի ջրերին, սպանում էին փախուստի ժամանակ, ապա՝ ի՞նչ հոգ. — մի շնով պակասէ, — ասում էր տեղական վարչութիւնն ու՝ ամենահանգիստ կերպով՝ իւր տեղեկագիրը կազմում, որ այս ինչ տաժանակիրն սպանուեց այս ինչ ժամանակ։  
 Բացի այդ բոլոր անյաղթելի խոչընդուները, կար և մի ուրիշ արգելառիթ հանգամանք, որ փախչել ցանկացողների կամ արդէն փախուստի ճանապարհը բռնածների գերեզմանն էր դառնում։ Այդ այն օրէնքն է, որ տեղական բնիկներն — այնօններն ու գիլեակները — և զինորները, եթէ փախած տաժանակիրն կամ բռնեն, կամ թէ սպանեն, իւրաքանչիւրի համար ստանում են երեք բուրլի. իսկ երեք բուրլին Սախալինում մի այնպիսի ահռելի գումար է, որի համար շատ շատերը դուրս կը գային մարդկանց որսի։  
 Փախուստ տալու այդ անթիւ և ծանր

հանդամանքների շնորհիւ, մեր տաժանակը ութեան օրական «դասը» վերջացնելուց յետոյ, մեզ թողնում էին աշխատանքի վայրում մնալու, հետեւեալ օրը նոյն տեղում մեր աշխատանքը շարունակելու համար։

Օրուայ տաժանելի, ֆիզիքական աշխատանքը կատարելուց յետոյ, մենք իրիւ կունն ուժասպառ վեր էինք ընկնում, աչքներս անձկութեամբ դէպի հեռուն երևացող մայր ցամաքի ափին գցում և, անձնատուր լինելով սպանիչ, դառն խոհերի, ինքնամոռացութեան մատնուած՝ քուն մտնում։ Առաւօտն արթնանալուց՝ մարդ մի բան ուտելու անդիմաղբելի ցանկութիւն է զգում։ Ուտել... բայց որտեղից, իւրաքանչիւր տաժանակիրն օրական տալիս են երեք գրուանքայ հաց, որ խոնջալից գործի ժամանակ չի էլ իմացում, թէ երբ կերանք, ինչպէս կերանք։ Այդ ի նկատի ունենալով, ոմանք սովորութիւն էին դարձրել իրենց ողորմելի երեք

Փունտից մի կէս Փունտաչափ կարել բերնիցը, հետևեալ օրուայ համար, Միայն գիշերը պահել զրպանում՝ փորձը ցոյց էր տուել, որ չէր կարելի. բոլորը սոված մարդիկ էին. գողանում, ուտում էին: Ուստի քանդում էին հողը կէս արշինաչափ, հացը գնում այնտեղ ու վրան պառկում: Բայց սովը, ամենակարող սովը, որ միւս տաժանակիրներին ևս խեղում էր, ստիպում էր այդ թշուառութեան որդեգիրներին երկու արշին, մի սաժէն հեռաւորութիւնից քանդել գետինը, հասնել փոսում թագցրած հացին ու հանել այնտեղից...

Ասածս չափազանցութիւն չէ, այլ մի շատ սովորական երեսյթ՝ հառաչանքների տակ թաղուած այդ կղզու վրայ. միթէ՞քիչ է պատահել, որ փախուստի ժամանակ, երկար թափառելուց յետոյ, քաղցածութիւնն այնպիսի խելագար գրութեան է հասցրել, որ ընկերն ընկերոջն սպանել ու նրա մսովն է կերակրուել:

Սրանով ես իհարկէ Սախալինը նկարագրելու միտքը չունիմ, մի քանի երեսում Սախալինը տեղաւորել՝ միամտութիւն է. բայց հէնց այս տողերն էլ բաւական են հասկանալու համար, որ տպարանում կառավարիչ նշանակուելուցս ու երեսուն բուրյի ամսական ստանալուց յետոյ, ես անշուշտ լաւ գրութեան մէջ էի գտնուում, քան թէ իմ միւս բախտակիցներս: Եթէ գրա վրայ աւելացնենք և այն, որ եազօնացի աշակերտներիս մօտ ես մարդ էի այլ ոչ թէ մի պարիա, մի դժբախտ տաժանակիր, ապա հասկանալի կը լինի, որ զուր չէր իմ գոհունակութիւնս:

## III

Ինչպէս ասացի, եազօնացի աշակերտներս դուրս եկան դիւրըմբոնող, բաւական ընդունակ մարդիկ. նրանք ժամանակի ընթացքում կարողացան հեշտութեամբ սովորել ու գրեթէ տիրա-

պետել ոռւսաց լեզուին թէ՛ խօսելում և  
թէ՛ զրելում։ Սովորելու ծարաւն ու  
նրանց ցոյց տուած եռանդն, աշխատասի-  
րութիւնն ինձ հիացնում էր. մանրունք  
ծախող հասարակ վաճառականներ լինել և  
այս տեսակ լեզու սովորելու եռանդ...  
ամենամին չէին նմանում իմ տեսած  
այլ վաճառականներին, որոնց ամբողջ  
գիտութիւնն արշինով սկսում և արշինով  
էր վերջանում էր։

Նրանց մէջ լուսանկարիչ ևս կար,  
որ, իբրև սիրող, զանազան տեսարաններ  
էր նկարում։ Ժամանակի ընթացքում իմ  
այդ 28—35 տարեկան վաճառական աշա-  
կերտներս այնքան կապուեցին ինձ հետ,  
այնքան սովորեցինք միմեանց, որ նրանք  
առաջարկեցին՝ իրենց հետ նկարուել  
խմբովին. և ինձ մէջ տեղ առնելով՝  
բոլորս նկարուեցինք միասին։

Այնուհետև դասաւութիւնս էլի տեսց  
բաւական ժամանակ, մինչև որ աշակերտ-  
ներս կամաց-կամաց սկսեցին հեռանալ

Կղզուց։ Այդ ոռւս-եապօնական պատե-  
րազմից մի տարի առաջ էր. Պատահում  
էր, որ նրանցից հինգ հոգի գնում էին  
եապօնիա, երեքը վերադառնում, չորսը  
գնում, մէկը վերադառնում, և այլն, մին-  
չև որ վերջերը մնացին, կարծեմ, միայն  
երեք հոգի, որոնք նորապէս թողեցին կղզին  
ու հեռացան, երբ կոռւի ձայնը տարա-  
ծուեց. Թէ ինչու նրանք գնում ու չէին  
վերադառնում, ոչ որ բացատրել չէր  
կարողանում և իսկի չէր էլ հետաքրքրու-  
ւում. — վաճառականներ էին, առևտուրը  
վերջացրին ու գնացին. ի՞նչ կայ որ. առև-  
տրական աշխարհում դա մի սովորական  
երկոյթ է։

Աշակերտներս գնալուց յետոյ, ես  
ինձ բաւական մենակ էի զգում և հոգե-  
կան բաւականութիւն էի գանում, երբ  
տպարանում գործու վերջացնելուց յետոյ՝  
տաժամակիրների երեխաներին էի սովո-  
րեցնում, պարզ բան է, ձրիաբար. մերկ,  
թշուառ մարդիկ էին, եթէ տային էլ,

կարելի՞ էր վերցնել. արեան գին կը լինէր. Այդ երեխաների հետ ես դեռ վաղուց էի պարապում, գուցէ և պատճառներից մէկն էլ դա էր, որ իմ շրջապատողների մէջ որոշ դիրք ունէի:

Գանք պատմութեանս թելին:

Սախալինում իրա օրերն անցկացրած մարդը միայն կարող է իմանալ, թէ որքան այդ կղզու բնակչութիւնը կտրուած է արտաքին աշխարհից: Դեռ պաշտօնեաներն էլի մի բան իմանում էին, գոնէ պաշտօնական հրահանգներից ու հեռագիրներից նրանք որոշ, հատուկտորտեղեկութիւններ ձեռք էին բերում: Իսկ տաժանակիրները... դուրսը աշխարհ քանդուի, տակն ու վրայ լինի, ոչ ոք ոչինչ չի իմանայ: Այդպէս՝ տասնեակ տարիներ Տաճկա-Հայաստանում, իմ աքսորուելուց յետոյ, հազարաւոր ցնցող դէպքեր էին տեղի ունեցել, բայց այդ մասին ես նոյնքան գիտէի, որքան, եթէ ապրելիս չլինէի: Ուստի զարմանալի չէ, որ Ռուս-

եապօնական պատերազմն արդէն ամիս ու կէս էր սկսուած, իսկ մենք ամենաթեթև լուր անգամ այդ մասին չունէինք, մինչև որ հեռագրական գործակալութիւնն այդ մասին յայտարարեց. տպարանում, որտեղ ես կառավարիչ էի, յայտնի դարձաւ ու տարածուեց կղզու բոլոր անկիւններում:

Սկսուած պատերազմը մեր՝ տաժանակիրներիս մէջ մեծ իրարանցում գցեց. զանազան տեսակ տրամադրութիւններ, յոյզեր ու յոյսեր ծնեցին Սախալինում: Նրանք մինչև անգամ, որ անգառնալի կերպով կորցրած էին համարում ազատուելու յոյսը, որ մայր ցամաքի մասին այլ ևս լսել անգամ չէին ուզում, որովհետեւ յաւիտենապէս մեռած էին հաշւում իրենց համար, նրանք էլ վերակենդանացան և տաք-տաք խօսում էին, թէ՝ ինչ կարող է բերել իրենց համար պատերազմը: Ամեն ինչից զրկուած, ամեն թանկագին բան, տուն, տեղ, ընտանիք

կորցրած ու տաժանակլրութեան մէջ տարիներ անցկացրած մարդիկ՝ ցանկանում էին պատերազմից առաջանալիք բոլոր հետևանքներն այնպէս դասաւորել, որ յօդուա իրենց վիճակի թեթևացմանը լինի:

Այդ միջոցներում էր, որ գեներալ Լեապունովը ապրիլի 30-ին 1905 թուի յայտարարեց ի լուր Սախալինեան բոլոր տաժանակիրների, որ Կայսրը յատկապես մեզ համար հրատարակել է հետեւեալ հրովարտակը, որի բովանդակութիւնն այստեղ ես առաջ եմ բերում համառօտ կերպով.

1) Թշնամու դէմ կամաւոր գրուող տաժանակիրների մի ամիսը հաշուել մի տարի:

2) Կամաւորների շարքերում գիւղացիութեան իրաւունք ստացած տաժանակիրն իսկոյն յատկացնել այդ իրաւունքը:

3) Տաժանակլրութիւնից գիւղացիութեան անցած և իրեն գիւղացի՝ կամաւոր

գրուածներին, եթէ նրանք կը մնան մինչև կամաւորների արձակումը, ապա նրանց իրաւունք տալ արքունական հաշուակ վերադառնալ հայրենիք և թոյլ տալ նրանց լնակչութեան աեղի ապատ ընտրութիւն Ռուսաստանի բոլոր կողմերում, նայնպէս և մայրաքաղաքներում ու մայրաքաղաքային նահանգներում, վերադարձնելով նրանց դատարանով կորցրած բոլոր իրաւունքները:

Սախալինի զինուորական նահանգապետի այդ հրամանից յետոյ կարելի է երեակայել կղզու տաժանակիրների և տաժանակլրութիւնից գիւղացիութեան իրաւունք ստացածների հոգեկան գրութիւնը: Ստեղծուեց մի էլեքտրականացած զրութիւն...

Օ՛, ազատուել Սախալինից... Դրա համար ոչ թէ կամաւոր գրուել, ոչ թէ երկուշերեք կոփէների արժէք մասնակցել, այլ հազար-հազար արխանահեղ ճակատամարտների, միայն թէ զնալ, մի կերպ

դուրս գալ այդ դժոխքից... թող պատերազմի դաշտում գնդակը ճակատդ փշու, թող եազօնացու սուխնը կուրծքդ մխուի, կամ թնդանօթի ոռւմբը քեզ կտոր-կտոր անէ, և դիակդ դիշակեր գաղանների կեր դառնայ, միայն թէ մոռանանք շղթաները, չմենք նրանց զարհուրելի շրիկոցը, ազատուենք մեզ ստորացնող, մեր մարդկային բոլոր արժանաւորութիւնները ցեխի մէջ շաղախող պայմաններից, միայն թէ գէթ մի անդամ էլ տեսնենք մեր քաղցը, կարօտած հայրենիքն ու այնպէս մեռնենք...

Ահա այդ միտքն էր, որ ծագեց կղզու դժոխքում եղողների մէջ:

Բայց միւս կողմից էլ... զըռւել արդեօք կամաւոր: Կային դառնութեան թոյնը մինչեւ յատակը քամած տաժանակիրներ, որ ուղղակի ասում էին.

— Կամաւոր զըռւել. գնանք ում օդնելու... Զէ, չենք ուզում:

Հոգեկան կոխն իմ մէջ երկար

տեսց. Երկու հաւասար ուժեր ներքին աշխարհումս դէմ առ դէմ էին ելել, և ես տանջւում էի.

— Գրուել կամաւոր, թէ չէ:

Երկար մաքառումից յետոյ՝ Սախալինից ազատուելու ցանկութիւնը գերակըշու իմ միւս զգացմունքներին, և կամաւորների ցուցակում՝ իմ անունս էլ դրի:

Այդպիսով՝ կամաւոր գրուզների թիւը հասաւ 8—9000-ի: Տաժանակիրների այդ բանակին զինեցին հին ձեփ հրացաններով—բէրդանկաներով ու միացրին տեղական զօրքերին, որով կազմուեց 16—17000-անոց մի բանակ:

Դրանից յետոյ կղզու կամաւորների ու զօրքերի ընդհանուր հրամանաւարը, որ Բաձրագոյն հրովարտակով գեներալ-լէյտէնանտ Լեալունովս էր նշանակուած՝ կղզին երեք պատերազմական շրջանների բաժանեց և հարաւային մասը, որ բոլորովին անջատուած էր, յանձնեց

մի գնդապետի, իսկ ինքը զօրքերից 10000-աշափ վերցնելով՝ իրեն թողեց միջին և հիւսիսային մասը։ Ես էլ, իբրև պատերազմական տպարանի կառավարիչ և կամաւոր, պէտք է գտնուէի գեներալին հետևող տպարանում, հրամաններ ու հրահանդներ շուտափոյթ տպագրել տալու, և, առհասարակ՝ այդպիսի դէպքերում տպարանական բարդ գործը տանելու համար։

Ամառուայ սկզբներին Սախալինի չորս կողմի սառոյցները հալուելով՝ հնարաւորութիւն են տալիս նաւերին կղզու ափերին մօտենալու։ Այդ ինկատի ունենալով, զօրքերի ընդհանուր հրամանատարը կղզու հարաւային շրջանը որոշ չափով ապահովելուց յետոյ, բանակը վերցրաւ և Ալէքսաղրօվսկիյ պօստից հեռացաւ եօթմասուն վերստի վրայ գլունուող Թիկօվսկ մեծ գիւղը, որ վեց-եօթ հարիւր տուն բնակչութիւն ունէր։ Գեներալի այդ քայլը նրա համար էր, որ

պէսզի եապօնական նաւերը, յարմարութիւն ունենալով կղզուն մօտենալու, իրեն յանկարծակիի չքերէին։ Սակայն ամառն անցկացաւ, վրա հասաւ Սախալինեան ցրտաշունչ ձմեռը, ծովերը սառան, և էլ երկիւղ չկար, թէ եապօնական զօրքը կարող էր ափ իջնել. ուստի գեներալը հրաման տուաւ նորից իջնել Ալէքսանդրօվսկիյ պօստից։

Այդտեղ, պօստում, մենք անցկացրինք ամբողջ ձմեռը, մինչև եղանակները տաքացան, սառոյցները սկսուեցին, և տիրեց նախկին սպասողական դրութիւնը, թէ ահա որտեղից որ է՝ եապօնական նաւերը կ'երևան կղզու մօտերքը։ Այդ ջղային դրութիւնը տևեց մինչև յուլիսի սկզբները, երբ գեներալը, որքան յիշում եմ, նորից մտադրուեց քաշուել դէպի Ռիկօվսկ, այնուեղ ամբանալու համար։

Բայց հէնց այդ օրերը յանկարծամբողջ Սախալինում, այստեղ-այնտեղ,

ոռւսերէն լեզուով տպագրուած թոռւցիկ-ներ երևացին՝ եապօնացիների կողմից ուղղած կղզու բոլոր թէ տաժանակիրներին, թէ տաժանակրութիւնից գիւղացիութեան իրաւունք ստացածներին։ Ի՞նչ միջոցներով, ում ձեռքով էին տարածուել այդ թոռւցիկները, յայտնի չէ, միայն նրանք գրուած էին հետևեալ բովանդակութեամբ։

Ոռւս-եապօնական կոիւը տարուց աւելի է որ տեսում է, և այդքան ժամանակամիջոցում եապօնական զօրքը ոչ մի պարտութիւն չէ կրել։ Ոռւսական ուժերը ջարդուած են թէ ծովում, թէ ցամաքում։ Գրաւուած են ոռւսական բոլոր ամրոցները, Պօրտ-Արաւուրը, Մուկդէնը։ Այժմ դիմում են դէպի Խարբին։ Ամբողջ Մանջուրեան իրենց ձեռքն է։ Գրաւել են Սախալինի հարաւային մասը և շուտով ամբողջ կղզուն կը տիրեն։ Ապա համառոտ կերպով պատմւում էր, թէ յեղափոխութիւնն ինչպիսի ծաւալ է ստացել Ոռւսաստանումներկայ կառավարութիւնը

խորտակելու համար, որ եապօնական զօրքը ազատութիւն է բերում ոռւս ժողովրդի համար և որ այդ ազատութիւնը շուտով կը ծագի և Սախալինում երկար տարիներ գեգերուող տամնեակ հազարաւոր աքսորականների համար։ «Իմացած լինէք, որ եապօնական զօրքը գալիս է ձեզ փրկելու այն կառավարութիւնից, որ ձեզ շղթաների զարկելով՝ անլուր տանջանքների է մատնել։ և, թէև եապօնական յաղթական բանակի համար ոչ մի նշանակութիւն չունի ձեր դիմադրութիւնը, այնուամենայնիւ զգուշացնում ենք բոլոր աքսորական-կամաւորներին, որ անինայ կերպով պէտք է պատժուեն ամենքը, որ զէնք կը բարձրացնեն մեր դէմ»—մօտաւորապէս այդպէս էր վերջանում թոռւցիկը, որի իսկականը մօտաչունենալով՝ յիշողութեամբ եմ առաջ բերում, համոզուած լինելով, որ, յամենայն դէպս՝ ոգին նոյնն է մնում։

Եապօնական թոռւցիկներում յի-

շուածները հաստատելու համար, շուտով  
կղղու հարաւային մասից Ալէքսանդրօվսկից  
պօստ հասան բազմաթիւ փախստական տա-  
ժանակիր-կամաւորներ, ողորմելի դրու-  
թեան հասած, ջարդուած, փոշէթաթախ:  
Նրանք սարսափելի գոյներով պատմում  
էին եալօնացոց կղղին մտնելն ու այն  
կոտորածը, որ տեղի էր ունեցել հարա-  
ւային մասում: Յաղթողներն անիմայ  
կերպով փշրել, կոտորել էին իրենց դէմք  
ենողներին, իսկ ձիաւորները՝ փախչող-  
ներին: Տաժանակիր-կամաւորներից երկու  
հազարաշափ կամ կոտորուել էին, կամ  
գլխատուել, ամբողջ կորսակովսկից շրջանը  
լիքն է դիակներով, գիւղերը կառարելա-  
պէս դատարկուել են, էլ կին, երեխայ,  
ծեր, երիտասարդ՝ զն են գնացել եալօ-  
նական գնդակներին ու սրերին...

Ահա այդ լուրերն էին բերել հարա-  
ւաց փախչողները, նկարագրելով այն  
սարսափը, որ եալօնական գորքն էր  
տարածել այնտեղ:

Պարզ էր, որ եալօնացիք կատա-  
րում էին թուցիկներում արած իրենց  
խոստումը, թէ չեն ինայի նրանց,  
որոնք գէնք կը բարձրացնեն իրենց  
գէմ: Նոյնպէս և պարզ էր, որ նրանք  
մեզ աչքաթող չեն անի և շուտով մեզ  
էլ կ'այցելեն:

Բայց և այնպէս, չնայած այդ սար-  
սափելի լուրերին ու նկորագրութիւննե-  
րին, մենք գրեթէ չէինք յուզում, չէինք  
էլ մտածում, թէ վաղն ինչ կարող է  
պատահել մեզ հետ: Գոնէ եւ ամենայն  
սաւնասրատոթեամբ իմ գործս էի կատա-  
րում: Սախալինում կրած մեր գանձու-  
թիւններն այնքան էին ուսուցիել մեր հո-  
գին, մեր սիրար, որ ոչ մի մահ մեզ  
փախեցնել չէր կարող: Եւ միայն երեխա-  
ներին համար էի մտածում, որոնք տա-  
ժանակի շղթաներին անծանօթ էին, և  
կեանքը նրանց գեռ հարկաւոր էր, որ  
գուցէ ապագայում պէտք գար ուրիշ  
տեղ, ուրիշ պայմաններում:

Իսկապէս՝ եապօնացիք մեղ երկար սպասել չտուին:

1905 թուի յուլիսի 10 էր. երբ մենք զբաղուած էինք մեր գործով, յանկարծ, առաւօտեան ժամը 10-ին մօտերը, ծովի երեսին երևաց մի եապօնական ականանաւ, որից յետոյ երևաց էլի երկրորդը, և երկուսը միասին՝ անհետացան: Զանցած մի ժամ, բազմաթիւ սև կէտեր ծայր առան ջրի մակերեսոյթին. դրանք եապօնացոց ուազմանաւերն էին, թուով մօտ հարիւր, որ, ագմիրալ կատաեամայի ղեկավարութեամբ, եկան, Ալէքսանդրովսկի պօստի դէմուգէմ, հինգ վերստի վրայ՝ շարուեցին պատերազմական կարգով: Ամեն ինչ պարզ ցոյց էր տալիս, որ շուտով կակտուի ոմբակոծութիւնը: Գեներալ Լեապունօվը հրամայեց, որ երկու վաշտ թնդանօթածիդներ գրաւեն կղզու ափին ցցուած ժայրերը և լեռնային

թնդանօթներով ու հրացաններով պատասխանեն եապօնացիներին:

Հետեւեալ օրը, ժամը 11-ից քիչ անց՝ եապօնական նաւերից որոտաց թնդանօթը: Մեր թնդանօթները նոյնպէս ձայնակցեցին ժայռերի վրայից, որից յետոյ նաւերից դէպի ժայռերն ուղարկուեցին մի քանի ոռումբեր, որով մերոնց տեղն էին շօշափում: և երբ գտան, սկսուեց մի սարսափելի, դժոխային թնդանօթային կրակ՝ դէպի մեր երկու վաշտը: Գեներալը, տեսնելով, որ իւր ձեռքում եղած ուժերով չպիտի կարողանայ էական դիմադրութիւն ցոյց տալ եապօնացոց սուկալի կրակին, ժայռերի վրայ գտնուող երկու վաշտին թողեց զբաղեցնել թշնամուն, իսկ ինքը, մնացած բոլոր ուժերը հաւաքելով՝ նահանջեց Ալէքսանդրովսկուց չորս վերստ հեռաւորութեան վրայ զբունուող Միխայլօվկա գիւղը, այստեղից խորքերն անցնելու: Մինչ այս, մինչ այն՝ եապօնական նաւատորմիդը իւր ահեղ

թնդանօթներով լուեցըին ժայրերի վրայից  
որոտացող թնդանօթներին ու հրացան-  
ներին, քշեցին կենդանի մնացածներին  
ափից, որից յետոյ բոլոր նաւերն ազատ,  
համարձակ մօտեցան քիչ էլ և, տարօրի-  
նակ արագութեամբ, 4—5 վերստ երկա-  
րութեամբ նաւակամուրջ զցելով վաթսուն-  
հազարանոց մի բանակ, կազմ ու պատ-  
րաստ, ժամը 5-ին կէսօրից յետոյ, ափ  
շպրտեցին:

Իսկ գեներալն այդ ժամանակ գլխա-  
ւոր ուժերն իրա հետ վերցած՝ ուզմա-  
կան բոլոր պարագաներով և կարգ ու  
կանոնով դէպի խորքերն էր դիմում, թի-  
կովսկի մօտերն ամբանալու և վճռական  
ճակատամարտը տալու:

Զօրքն արագացրած քայլով դիմեց  
դէպի Թիկօվսկ, ես էլ նրանց հետ, սա-  
կայն եազօնացիք երկի բոլորովին արա-  
մաղրութիւն չունէին մեզ հանգիստ թող-  
նելու, և իսկի չէր էլ երկում, թէ նրանք  
միջոց պէտք է տային գեներալին՝ ճա-

կատամարտը տալու յարմարութիւնները  
ստեղծելու: Եազօնացոց ցամաքային զօր-  
քի հրամանատար գեներալ Խարանկիչին  
ամեն կերպ ցոյց էր տալիս, որ ժամանակ  
կորցնելու միաք չունի, և իւր յաղթական-  
բանակով մեզ հետամուտ էր լինում այն  
արագութեամբ, ինչ արագութեամբ մենք  
դէպի կղզու խորքերն էինք շտապում:  
Այդպէս, յուղիսի 11-ին, երկուշաբթի օրն,  
ափ իշնելով և Սլեքսանդրօվսկին տիրե-  
լուց յետոյ, նրանց ձիաւոր խուզարկու  
զօրաբաժիններն աւելի կարճ ճանապար-  
հով հասան մեզ և երկու տեղ թեթև  
ընդհարումներ ունեցան մեզ հետ: Ան-  
պայման նրանց մէջ տեղին ծանօթ մարդ  
կար, որովհետև նրանք իրենց հետապնդ-  
ման ժամանակ նոյնպէս էին շարժւում,  
կարծես իրենց մի շատ ծանօթ երկրում:  
Յուղիսի 12-ին մեր զօրաբանակը  
հասաւ Թիկօվսկ գիւղը, որ բաւակա-  
նին մեծ, վեց հարիւր տուն ունեցող գիւղ  
էր: Գեներալը դուրս եկաւ, գիւղից եր-

կու վերստ հեռաւորութեան վրայ բանակը դրաւ, իսկ ես մտայ գիւղը, ընդհանուր փողոցի վրա մի խրճիթ վարձեցի, տունս տեղաւորեցի այնտեղ, և այնուհետև առաւօտեան շուտով գնում էի պաշտօնատեղիս, իսկ ուշ երեկոյեան՝ վերադառնում գիւղը:

Յուլիսի 13-ին եապօնական խուզարկու ձիաւոր զօրաբաժինը, մօտ 100 հոգի, եկան, մօտնցան գիւղին, և մի առանձին համարձակութեամբ, մէկ-մէկ, իւրաքանչիւրը մի կէս ըռպէ միւսից յետոյ՝ պընթաց քշեցին գիւղամիջով և եկան ընդհանուր հրապարակի վրայ գըտնուող եկեղեցու մօտ կանգ առան, ապա փողոցի երկարութեամբ՝ իրենց պահակները դըին։ Կասկածի ոչ մի տեղիք չէր մնում, որ եապօնական բանակը մօտիկ է և նրանց մուտքը լոկ ժամերի խնդիր է։ Հետեւալ օրն առաւօտեան ես պատրաստուած, պաշտօնատեղիս գնալ էի ուզում, բայց կինս խստիւ հակառակեց,

պնդելով, որ մի քիչ էլ սպասեմ, տեսնենք, ինչ է դառնում։ Սակայն գործոթողնել անկարող էի, վրաս պարտականութիւններ էին դրուած, և ես պէտք է կատարէի։

Եւ մինչդեռ ես պատրաստում էի տանից գուրս գալ, յանկարծ գիւղի նեքելի կողմից հազարաւոր հրացաններ որոտացին և նրանց մահաբեր գնդակները զարկեցին գիւղի ամեն անկիւններին։ Այդ եապօնական բանակն էր, որ առանց որևէ գիմազըրութեան՝ գիւղն էր մտնում։ Ես յետ քաշուեցի սենեակս, իսկ հրացանները մի խլացուցիչ ճայթոցով թընդում էին անընդհատ։ Բիկօվսկի չորս կողմը կարծես մի մահասարսուռ, երկնային արհաւիրք էր բարձրացել, որ բոլորին անխնայ պէտք է կլանէ, ոչնչացնէ։ Եւ իսկապէս, գիւղի փողոցներում ու մների առաջ՝ արդէն 600-աշափ գիւղին էին փուռել բնակչութիւնից։ Եապօնական անողոք գնդակները ոչ ոքի չէին խնայել.

նչ ծերի, ոչ կանանց, ոչ ջահէլների ու  
երեխանների. նրանց դիակները խառնի-  
խումն թափուել էին զանազան կողմե-  
րում:

Պատերազմի անողորմ աստուածն  
էր այդ, որ իւր մահաշունչ թևերն էր  
տարածում թշուառ գիւղի վրայ, ուր  
բնակւում էին տաժանակրութիւնից Սա-  
խալինեան գիւղացիութիւն ստացած աք-  
սորականներն, իրանց ողորմելի գոյու-  
թիւնը մի կերպ քարշ տալով: Երեկի եա-  
պօնական հրամանատարը գիւղում դա-  
րանի գոյութիւնն անխուսափելի էր գտել,  
թէև նրանց խուզարկու ձիաւոր խումբը  
այդպիսի քան չէր տեսել: Եապօնացոց  
զօրքի այդ տեսակ անխնայ վերաբեր-  
մունքը գուցէ պէտք է վերագրել և  
նրան, որ նրանց պահակներից մի քանի  
հոգու գիւղում նախընթաց օրը բռնել և  
կտոր-կտոր էին արել:

Այսպէս թէ այնպէս՝ զօրքը կատաղի  
գնդակակոծութեամբ գիւղը մտաւ առա-

ւոտեան, և ես այդ կոտորածը տեսնելով՝  
արդէն երեխաններիս ազատելու յոյսը  
կորած էի համարում, և այդ ըոպէին  
թերես ես աւելի տաճջանք զգացի, քան  
թէ 16-ամեայ բանարկութեանս ու տա-  
ժանակրութեանս միջոցին: Բայց անհնա-  
րաւորութեան դէմն ով կարող է առնել. և  
ես սպասեցի իրերի ելքին:

Մի երկու ժամից յետոյ՝ հրացանաշ-  
ձգութիւնը գիւղի մէջ բոլովին դադարեց  
և միայն գիւղից զուրս մի առժամանակ  
ուժեղ թնդիւններ էին լսում, որ նոյն-  
պէս հետզհետէ դադարեց, որովհետեւ  
ուռսական զօրքն այնտեղ գիմադրութիւն  
ցոյց չտուաւ և զեներալ Լեապունօվի  
հրամանով՝ նահանջեց գէպի էլ հիւսիս,  
Օնօր գիւղի կողմերը, որ Ախոտեան  
ծովի ափերին է գտնւում: Թնդիւնները  
դադարեցին, սակայն եապօնական զօրքի  
վերջը գեռ չէր տեսնւում. նրանք գիւղի  
միջի ընդհանուր փողոցով գնում էին ու  
գնում, և իրիկնադէմին միայն նրանց

*տուտը կտրուեց:*

Երբ զօրքն առաւօտեան արգէն գիւղն  
էր մտել ու, ոչ մի աեղից դիմադրու-  
թիւն չտեսնելով՝ դադարացրել էր կոտո-  
րածը, գիւղացիներից աւելի համարձակ-  
ները, սիրտ առնելով զօրքի ընդունած  
խաղաղ տրամադրութիւնից, կամաց-կա-  
մաց դուրս եկան և, դրան շէմքում կան-  
գնելով, սկսեցին եապօնական զօրքի յաղ-  
թական մուտքը նայել: Ես էլ, չնայելով  
մերոնց հակառակուելուն, թէ՛ ով գիտէ,  
ինչ կարող է պատահել, դուրս եկայ  
դուռը, որ ուղիղ փողոցի վրայ էր գրա-  
նւում, և կանգնեցի այդտեղ բարձրացած  
ծառի տակ: Կէս ժամու չափ եապօնա-  
ցիներին էի գիտում, երբ նրանցից եր-  
կուսը, մէկը գնդապետ, միւսը օֆիցէր,  
նայեցին իմ կողմս և ծոռւեցին դէպի  
ինձ, և երբ բոլորովին մօտեցան, նրան-  
ցից մէկը, օֆիցէրը, դարձաւ դէպի ինձ  
մտքուր ոռւսերէնով:

— Դուք ուսուցիչ էք:

— Այս, — պատասխանեցի ես յան-  
կարծակի գալով, առանց հաշիւ տալու,  
թէ՛ ես ի՞նչ ուսուցիչ եմ:

— Դուք այս տանն էք ապրում, —  
հարցրեց նոյն օֆիցէրը, իմ բնակարանա-  
ցոյց տալով:

— Այս, այստեղ եմ ապրում:

— Կարելի՞ է ձեզ մօտ մտնել:

— Համեցէք, — ասացի ես, առաջ  
ընկնելով, միենոյն ժամանակ բացատրել  
չկարողանալով, թէ՛ ինչո՞ւ այս օֆիցէրներն  
անպատճառ իմ բնակարանս յարմար  
գտան մտնելու կամ ինչո՞վ այդ փայտա-  
շէն խրճիթն աչքի էր ընկել:

Մենք մտանք սենեակս: Կիսս թէյը  
վաղուց պատրաստել, նորից տաքացրել,  
դրել էր սեղանին: Բայց այդպիսի ջղային,  
լարուած դրութեան մէջ ով ախորժակ  
կ'ունենար թէյ խմելու, Սակայն այժմ,  
թէկ «անկոչ», բայց հիւրեր ունէի, և  
պէտք է նրանց հիւրասիրէի: Կիսս ու  
երեխաներս սկզբում սառան և երկիւդ

ցոյց տուին, նոյն երկիւղի զգացմունքն ունէի և ես: Բայց հիւրերս թշնամական ոչ մի վերաբերմունք չէին ցոյց տալիս. գոնէ նրանց արտաքինից ոչինչ թշնամական բան ենթադրել չէր կարելի, և մենք, առերևոյթո՞ւ հանգստացանք:

— Ինչքան ոյժ ունի Լեապունօվը իւր ձեռքի տակ,—հարցրեց ոռւսերէն իմացող օֆիցէրը:

— Ես տաժանակիր եմ,—պատասխանեցի նրան, խուսափելով ուղիղ պատասխան տալու, և իրաւունք էլ չունէի, որոնետե պատերազմի ժամանակ թշնամուն տեղեկութիւններ տալը դաւաճանութիւն է, իսկ ես, թէկ տանջանքների եթնարկուած, այնուամենանիւ՝ ոռւսահաղատակ էի և կամաւոր:

— Դուք գուցէ չէք ուզում ձշմարիտն ասել, բայց մեզ ամեն բան յայտնի է,—վրա բերաւ օֆիցէրն ու սկսեց զանազան, ուրիշ տեսակ հարցուփորձեր: Ես նորից զգուշաւորութեամբ շեշ-

տեցի, որ Սախալինում տասնեակ տարիներ տաժանակիրներից ոչ մէկն այդ հարցերին պատասխանել չի կարող, որ ես էլ այդ իրաւագուրկներից մէկը լինելով՝ բնականաբար ոչ մի առնչութիւն, ոչ մի կապ չունենալ կառավարական գործերի հետ, չէի կարող, ուրեմն և անտեղեակ եմ միանգամայն:

Պատասխանս բաւականաչափ դրական էր, սակայն հիւրս դէմքի ոչ մի արտայայտութեամբ ցոյց շտուաւ, թէ որքան գոն կամ դժգոն է ինձնից: Նա թէյի բաժակն առաջքաշեց, և, չդիտեմ, ինչ էր ուզում ասել, որ այդ միջոցին աչքն ընկաւ սեղանին դրուած այն պատերին, որ ես էի նկարուել եապօնացի աշակերտներիս հետ, և որոնք պատերի տակ մակագրել էին եապօներէն, թէ ում են նուիրում այդ պատերը: Այժմ էլ գեռ լաւ չեմ կարողանում պարզել, թէ ինչպէս էր այդ պատերն ընկել սեղանին. Երեկի կինո արդէն կարողացել էր

սենեակը մի քիչ կարգաւորել և պատկերն էլ, իբրև զարդարանք՝ դրել սեղանին:

Օֆիցէրը բաւականաչափ պատկերը դիտելուց յետոյ՝ դարձաւ ինձ:

— Ասում էք, որ դուք ուսուցի՞չ էք:

— Այո, — պատասխանեցի ես, նախկին ասածս հաստատելով:

— Եւ նրանք ձեր աշակերտներն են, — ցոյց տուաւ նա պատկերի եապօնացիներին:

— Այո, իմ աշակերտներս են:

— Հմ... — արաւ օֆիցէրը ու մատը դրաւ. եապօնացիներից մէկի վրա, — սրա անունն ինչ է:

— Նօգուշի:

— Սրանը:

— Մուրամացու:

— Սրանը:

— Նեմօտո Մօիչի:

Այսպէս նա մէկ-մէկ հարցրեց բոլորի անուններն, ինձ զարմացնելով՝ թէ

ինչու է այս մարդն այսպէս մի առ մի հարցնում այդ վաճառականների անունները. մի չարիք դուքս չգայ... Տասնուվեց տարուայ դժոխքն ինձ այնքան էր տանջել — մաշել, որ իրաւունք ունէի կասկած տանելու մանաւանդ. Սախալինը տիրող բանակի մի օֆիցէրից, որն ինձ ուսուցիչ էր անուանել և, չգիտեմ, ինչու համար, հիւր էր եկել ինձ մօտ:

Բոլորի անուններն իմանալուց յետոյ, օֆիցէրը մատը գրաւ վերջին աշակերտիս վրայ ու, երեսիս նայելով՝ հարցրեց:

— Իսկ սա ով է, ասացէք ինդըեմ: Ես կանգ առայ, նրա մի այլ ձեռվ տուած հարցն էր պատճառը, թէ մի այլ բան, չգիտեմ, միայն այսքանս յայտնի է, որ յիշողութիւնս դաւաճանեց ինձ, կորցրի աշակերտիս անունը և ոչ մի կերպ յիշել չկարողացայ: Երկու բոպէաչափ ուղեղս գրգռելուց, յիշողութիւնս լարելուց յետոյ պատասխանեցի, որ յիշել չեմ կարողանում:

— Ինչպէս, — զարմացաւ օֆիցէրը. —  
ձեր աշակերտն է և անունը չէք յիշում:  
— Մոռացել եմ, բայց գուցէ յիշ  
շեմ, — արդարացայ ես:

— Որոնեցէք, գուցէ յիշէք:  
— Զէ, ճիշտն ասած, անունը չեմ  
մտաբերում, բայց կարծում եմ, որ երբ-  
եիցէ կարող եմ մտաբերել:

— Պէտք է յիշէք, — շեշտեց օֆի-  
ցէրն ու երեխաներիս գոյնզգոյն մատիտ-  
ներ ու տետրակներ ընծայելով՝ բաւական  
քաղաքավարութեամբ իւր շնորհակալու-  
թիւնը յայտնեց հիւրասիրութեանս հա-  
մար ու դուրս եկաւ, աւելացնելով:

— Մենք էլի կը պատահենք:

Այդ ի՞նչ խորհրդաւոր՝ «մենք էլի  
կը պատահենք» էր. սպառնալիք էր, թէ  
մի հասարակքաղաքավարութիւն, — չդիտեմ.  
Դա ինձ համար խսկի նշանակութիւն չու-  
ներ, և ես շատ սառնարտութեամբ վերա-  
բերուեցի դէպի նրա այդ նորից հանգի-  
պելու խոստումը: Միայն կիսս էր, որ

հազար ու մի վտանգաւոր եզրակացու-  
թիւններ էր հանում ու շարունակ աշխա-  
տում բացատրել, թէ՝ ի՞նչ էր ուզում  
դրանով ասել եապօնական օֆիցէրը և  
թէ ի՞նչու նա իրենց շտաբի տեղը ցոյց  
տուաւ, խորհուրդ տալով, թէ՝ պէտք լի-  
նելուց՝ դիմել այնտեղ:

## V

Եապօնական զօրքը Ռիկօվսկը տի-  
րելուց յետոյ, որ աեղի ունեցաւ յուլիսի  
14-ին, առանց դադար առնելու հետա-  
մուտ եղաւ գեներալ Լեապունօվին, որին  
հասաւ Օնօրա գիւղի մօտերը, Ախոտեան  
ծովի ափին: Ի՞նչ կարող էր անել կամա-  
ւորների և կանոնաւոր զօրքի մի տասհա-  
զարանոց բանակ եապօնական վաթուն-  
հազարաշափ մի ուժի գիմաց, որ առանց  
այն էլ արբեցած էր մշտական յաղթու-  
թիւններով: Գեներալ Լեապունօվը իւր  
ձեռքի տակ ունեցած բոլոր զինուորնե-

ըով ու սազմական մթերքներով գերի ընկաւ, նրանց բերան Ռիկովսկի, այստեղից՝ Ալէքսանդրօվսկիից պօստ, իսկ այդտեղից էլ, անմիջապէս, եապօնական նաւերով, գէպի եապօնիա, որից յետոյ իրենց իշխանութիւնը հաստատեցին ամբողջ կղզու վրայ:

Սախալինում տեղի ունեցած կոփւներն ու հետապնդումները սոսկալի հետևանքներ ունեցան տաժանակիրների համար, թէ նրանց, որ կամաւոր էին գրուել և թէ նրանց, որ գիւղերում էին մնացել այս կամ այն պատճառով։ Շատքչերը միայն կարողացան վայելել կայսերական հրովարտակով տրուած բարիքները. կամաւոր գրուածները, նրանք, որ հարաւային մասումն էին գտնուում, համարեա բնաշինջ էին եղել, մնացածն էլ հիւսիսային մասումն էին կամ գնդակի գոհ գնացել, կամ գերի տարուել։ Գիւղերը դատարկուել էին, պատերազմին յաջորդող սարսափը, սովու ու հիւսադու-

թիւնները տարածուել, իրենց հունձն էին կատարում։

Սախալինի նուաճումը կատարուեց տարօրինակ արագութեամբ, և ինչ արագութեամբ որ կղզին էին նուաճել նոյն արագութեամբ էլ եապօնական զինուուրական ատեանն էր գործում Ռիկովսկում. զինուաճում էին թշնամու գլուխներ էին, որ թուչում էին թշնամու թրերից։ Մի փոքր կասկած, որ այս ինչը լրաց է կամ գերուելուց խուսափած ուռւս պաշտօնեայ, և նա գլխատում էր։ Այդ ի նկատի ունենալով՝ շատերը, թէ գերութիւնից և թէ պատժից ազատուեց համար, դիմում էին տաժանակիրների հագուստին, որովհետեւ նրանք խնայուում էին եապօնացիներից, եթէ զէնք չունէին ձեռքներին և դիմադրութիւն չէին ցոյց տուել։

Այդպէս՝ ծպտուել էին ի միջի այլոց և Սախալինի միջին Մջանի կառավարչի օգնական Սալանինան, ոստիկանատան քարտուղարն ու ոստիկանապետը. նրանք

հագել էին տաժանակիրների հագուստ, այն տաժանակիրների, որոնցից մի ժամանակ խորշում էին իբրև մի զգուելի, գարշահոտ իրից: Բայց այժմ... այժմ պայմանները փոխուել էին և կղզու մի մասի նաշանիկի օգնականը, աւելի շուտ՝ կղզու աստուածը՝ տաժանակիրի ողորմելի հագուստին էր ապաւինել իւր կեանքը: Բայց տաժանակիրների շորերն էլ օգնել չկարողացան. ատողներն այնքան շատ էին, որ նրանց մասնեցին, եապօնական ժանդարմները բռնեցին և իսկոյն, հէնց փողոցի մէջ, երեքին էլ զիխատեցին, սարսափ տարածելով բոլորի մէջ:

Նրանց զիխատելուց յետոյ, մի ոռւս՝ աքսորականներից՝ մօտենում է, ցանկանալով Սալանինայի կօշիկները հանել. նրան տեղն ու տեղը զնդակահարեցին: Մի քանի ժամ չանցած, մի ուրիշ եկաւ, ծոցը պտուելու. նրան էլ զնդակահարեցին: Եւ երբ երրորդն էլ այդ ձեռվ զնդակահարուեց, այնուհետև, չնայելով, որ

եապօնացիք իրենք էին կանչում, ոչ ոք չհամարձակուեց մօտենալ, զիխատուածների զիխակները վերցնելու: Վերջապէս իրիկնադէմին միայն եկան երեք թուրք, սայլի մէջ դրին զիխակներն ու դուրս տարան: Նրանցից մէկը, Սալանինայի կուրծքը բաց անելով՝ գտնում է այնտեղ զից կախած մի քսակ, մի խոշոր գումար մէջը, մօտ 18000 ր.: Թուրքն այդ բանն այնքան գաղտնի պահեց, որ երկու ամիս յետոյ ինքն էլ զարկուեց ու կորաւ փողի հետ մէտասին:

Գլխատումները շարունակում էին եռանդուն կերպով. և դեռ Ռիկօվսկը եռանդուն երկրորդ օրն էր, որ եապօնացրաւելու երկրորդ օրն էր, որ եապօնացրաւելու երկրորդ օրն էր, մի յայտարարուկան կառավարութիւնը մի յայտարարութիւնը բաց թողեց, որ կղզու վրայ իրենց իշխանութիւնն է, և նրամայելում է բոլոր նրանց, որոնք որևիցէ զէնք ունին, անմիջապէս տանել ու յանձնել նշանակուած տեղը: Սարսափն այնքան մեծ էր, կուած տեղը: Սարսափն այնքան մեծ էր, ի եապօնացիք իրենց ասածն այնպիսի

ճշոռւթեամբ էին կատարում, որ ոչ ոք  
ախորժակ չունեցաւ իւր ունեցած զէնքը  
պահելու, և բոլորը տարան ու յանձնե-  
ցին. այնպէս արին նրա համար, որ հրա-  
մանի մէջ ասուած էր, թէ եթէ հրամա-  
նից մի օր յետոյ մէկն ու մէկի մօտ  
որևէ զէնք գտնուեց, նա առանց այլե-  
այլութեան՝ մահուան պիտի դատապար-  
տուի: Ես էլ մի ատրճանակ ունէի, տարի  
ու յանձնեցի, սակայն մոռանալով, որ  
մի քանի փամփուշտներ մնացել են:

Զէնքերը յանձնելու հետևեալ օրը  
սկսուեց մի ամբողջական խուզարկութիւն,  
բոլոր տներում. և վայ էր, եթէ մէկի  
մօտ մի բան էր ճարւում. այդպէս, զինուո-  
րական բժշկի մօտ մի փոքրիկ ատրճա-  
նակ ճարուեց, Սմիտ Վիսոնի, շորե-  
րում թագցրած: Բժշկին առաջ քաշեցին  
և, չնայելով երեխաների վայնասունին,  
կնոջ աղաչանք-պաղատանքին, հէնց աեղն  
ու տեղը գնդակահարեցին:

Քսան հոգու չափ էլ դէպի իմ բնա-

կարանս եկան. կինս խորհուրդ տուաւ  
վերցնել երեխաներին ու դէպի մօտակայ  
ծառերը գնալ: Ես, թէ գիտէի, որ տանը  
ոչինչ չունեմ, յարմար գտայ հեռանալա:  
Վերցը երեխաներս ու անցայ դէպի  
ծառերը, որտեղից ամեն բան, ինչ որ  
կատարուէր տանը, ես տեսնել կարող  
էի: Քիչ յետոյ խուզարկուները տունս  
մտան, եղած-չեղածը տակն ու վրայ  
արին, բայց ոչինչ չգտան, բացի մի քանի  
փամփուշտից, որ, չգիտեմ ինչպէս, տանն  
էր մնացել: Իսկոյն եապօնացիք փամ-  
եր մնացել դրած հրացանները վեր քաշե-  
ցին դէպի կինս, պահանջելով, որ այդ  
փամփուշտների զէնքը տայ: Իմ սիրաս  
սկսեց արագ-արագ բարախել, ուզում էի  
թագստեանս տեղը թողնել, տուն վագել,  
բայց կինս իրան չկորցրեց. չնայած  
վրան ուղղած հրացաններին, նա նորից  
պնդեց, որ տանը ոչինչ չկայ, զէնքերը  
երէկ են բերել, յանձնել, իսկ փամփուշտ-  
երէկ են բերել, յանձնել, իսկ փամփուշտիւն  
ների գոյութեան մտախն տեղեկութիւն

չեն ունեցել։ Վերջապէս նրանք հեռացան, ես լիաթոք շունչ քաշեցի ու տունդարձայ։

Բայց պատուհանները դրանով չվերջացան։ Ինչպէս ասացի, տեղացիները սարսափից թէ ատելութիւնից՝ մատնում էին բոլոր նրանց, որոնք փոքրիշատէ իշխանաւորութիւն էին ունեցել կղզու մէջ և այժմ, տաժանակրի շորեր հաղած, իրենց կեանքը փրկել էին ցանկանում։ Գեներալ Լեապունօվին իրա գօրքերով գերի բոնելուց ու Եազօնիա քշելուց յետոյ, երբ գլխատումներն ամբողջ թափով առաջ էին գնում, Եազօնական ժանդարմները եկան, իմ հարևանութեան վրայ գանուող երկու բանտային նաղկիւրատելների, ծպտուած տաժանակրի շուրերում, ձերբակալեցին, նրանց շրջապատճառ կանչեցին, անունս կարգացին ու... ձերբակալեցին իբրև ուռւսական պաշտօնեայի տաժանակրի հագուստում թագնուած։

Կինս, երեխաներս լաց ու կոծ բարձրացրին. նրանց համար պարզ էր, որ այլևս վերադարձ չկայ, բայց լացն ու աղաղակն էլ ի՞նչ կարող էր օգնել, քանի որ մահը արդէն եկել և մեր գուռն էր ծեծում։ Ես վերջին անգամ նայեցի շուրջս և, որպէսզի մերոնց մի քիչ մխիթարեմ, մի երկու խօսք ասացի ու առաջ ընկայ։ Եւ երկար մխիթարել իսկի չէի էլ կարող, որովհետեւ ժանդարմներն արդէն մեզ մէջ առան. բոլորը մի քանի ակնիթարթում կատարուեց։ Մի ըոպէում իմ աշքիս առաջից, ինչպէս մեռնողի աշքի առաջից, եկան, անցան իմ անցկացրած կեանքիս բոլոր օրերը, տաճկական սահմանից մինչև Սախալինի շղթաները, կամաւոր զբուելս, Եազօնացոց մուտքը կորցրած աղատութիւնս, որին համել և կորցրած աղատութիւնս, որին համել չկարողացայ, բայց որին այժմ կը գտնէի շկարողացայ, բայց որին այժմ կը գտնէի եազօնական գլխատող թրերի տակ... Զէ Եազօնական գլխատող թրերի տակ... Ես կ'աղաք այդ էլ աղատութիւն էր. Ես կ'աղատուէի վերջապէս գառնութիւնների, տան-

ջանքների անվերջ օղակներից...

Ճանապարհին նազգիրատէներից մէկը ուշաթափուեց, ու նրան զրեթէ բարձրացրած էին տաճում. միւսը մի երկու անդամ նոյնպէս նուաղեց, բայց քայլում էր առանց ուրիշի օգնութեան. իսկ ես գնում էի հէնց այնպէս, մեքենայաբար, առանց զգալու, թէ ուր են տաճում ինձ, որտեղ եմ գտնուում, ուր եմ գնում և ինչ է կատարուում շուրջ:

Եապօնացոց զինուորական գլխաւոր շտարն այնտեղ էր գտնուում, ուր առաջ ապրում էր ոուսական նահանգապետը. այդ շնութեան պատշգամբը նայում էր այն հրապարակին, ուր գլխատում էին յանցաւոր կարծուած ոուսներից շատերին: Մեզ էլ տարան այդ հրապարակը և, փոխանակ իսկոյն գլխաւուու, վեր հանեցին պատշգամբն, իսկ այնտեղից մի սենեակ, ուր սեղանի առաջ նստած էր մի ծեր գեներալ, որ հէնց ինքը՝ գեներալ Խառնկիչին էր:

Երբ մեզ ներս տարան գեներալի մօս, այդ միջոցին գեներալի աղիւտանտը, մի ջահէլ օֆիցէր, մօտեցաւ և սկսեց ինչոր խօսել. գեներալը ուշադրութեամբ ականջ էր դնում: Ինչ էր ասում աղիւտանդը, ես չէի հասկանում, չնայելով, որ եապօներէն շատից-քիչից իմանում էի. այնպիսի հոգեկան յուզուած դրութեան մէջ էի, որ նրանց խօսակցութիւնը միայն մի անորոշ դոգոսցի էր փոխուել, որ միօրինակ և անընդհատ տարածւում էր սենեակում: Ինչ խօսեցին, ինչ չխօսեցին, իհարկէ, չիմացայ. միայն ազօտ կերպով ինձ թուաց, թէ՝ երբ աղիւտան-կերպով ինձ թուաց, վերջացրեց, գեներալ իւր ասելիքը վերջացրեց, կեներալ Խառնկիչին կէս-ժպտագէմ, կէս-հետապարմները նայեց դէպի ինձ ու հրամայեց տաքրքիր նայեց դէպի ինձ ու հրամայեց դուրս տաճել մեզ, ինչոր ուղղելով իմ հասցէին:

Ժանդարմները արջապատեցին երեքին, իջեցրին դէպի հրապարակ, որ մեղ ինձ շրջանից դուրս թուաց ինձ աղիւտանդին: Ես

կէս ըռպէշաչափ կանգնելուց յետոյ միայն  
ընազդմամբ զգացի, որ ազատ եմ թող-  
նուած, ու շուռ եկայ գէպի փողոց. և  
նախ քան ես շուռ կը գայի, իմ աչքիս  
առաջ թրերը բարձրացան և թշուառ,  
բախտակից ընկերներիս զլուխները թուան  
հրապարակի վրայ:

Դուրս եկայ փողոց: Ես քայլում էի,  
ճիշտ է, բայց դեռ սթափուած չէի. այն,  
ինչ որ պատահեց այդ զարհուրելի ըռ-  
պէներում, զարերի չափ երկարատև  
երազի, սարսափելի մղձաւանջի պէս մի  
բան էր, որ, իւր ամբողջ ծանրութեամբ  
նստած ուղեղիս ու հոգուս վրայ, ճնշում  
էր, ճնշում... Եւ ես չզգացի, թէ ինչ-  
պէս անցկացայ խրճիթս, ուր երեկի երե-  
խաներս ու կիսս էին արտասուք թա-  
փում, չզգացի, թէ ինչպէս անցայ փո-  
ղոցը իւր ամբողջ երկարութեամբ, և  
գիւղից դուրս գալուց յետոյ միայն ուշա-  
բերուեցի, ճակատս շփեցի խոր քնից  
արթնացածի նման, մի ըռպէ հաշիւ տուի

այդ նոր անցկացրած ըռպէներիս մասին  
և, շուռ գալով՝ գէպի տուն շտապեցի:  
Երբ դուռը բաց արի ու սենեակ  
մտայ, այնտեղ գտնուողները մի ըռպէշ-  
չափ քարացած, ընդարձացած մնացին.  
Կարծես, չէին հաւատում, որ այդ ես եմ.  
Նրանք երբէք մտքներով անցկացնել չէին  
կարող, թէ ես կենդանի կը մնամ, քանի  
որ անթիւ փաստերով գիտէին, որ եա-  
պօնական զինւորական վճիռը, որոշումը  
ամենքի համար մահ է առանց բացառու-  
թեան, ինչ պայմաններում էլ լինի: Կիսս,  
երեխաներս եկան, ինձնով փաթաթուե-  
ցին, երեսս, ձեռներս համբուրեցին... Ես  
ցին, երեսս, այժմ միայն իրաւունք  
գրեցի նրանց և այժմ միայն իրաւունք  
համարեցի ինձ թոյլ տալ զգացմունքնե-  
րիս արտայատուելու, ինձ պահել չկարո-  
ղացայ ու... արտասուեցի:

Երբ Ռիկօվսկում իմացել էին, որ  
ինձ երկու նաղպիրատելի հետ տարել են  
գլխատելու, ինձ մօտիկ քաղաքական յան-  
շաւորներից եկել էին մեր տուն, կնոջս,

Երեխաներիս մխիթարելու։ Եւ այժմ՝  
նրանք պակաս չուրախացան իմ վերա-  
դառնալովս, սակայն կասկածը դեռ  
կրծում էր նրանց սիրտը, որ ես ազատ  
եմ, և երբ ես ինձ տիրապետեցի, նրանք  
ինձ հարցը։

— Ասա, ի սէր Աստուծոյ, դու բոլո-  
րովի՞ն ազատ ես թողնուած։

— Չգիտեմ, —պատախանեցի նրանց,  
բայց, կնոջս սարսափը նկատելով, աւելա-  
ցրի։ — Եթէ ազատ չլինէի, էլ այստեղ  
ի՞նչ գործ ունէի։

— Ճիշտն ասած, ես կարծում էի,  
թէ դա կամ մի թիւրիմացութիւն է, կամ  
քեզ բաց են թողել մի կարճ ժամանա-  
կով, որիէ գործի համար, —ասաց մէկը։ —  
Բայց ինչպէս եղաւ, որ քեզ ազատ թո-  
ղեցին. այդ ի՞նչ հրաշք է։

— Ի՞քս էլ չգիտեմ. ես գնում էի,  
կամ աւելի ճիշտը, ինձ տանում էին  
դէպի անխուսափելի մահը. զրան ապա-  
ցոյց՝ ինձ հետ տարուած երկու բանտա-

յին նադզիրատելները, որոնց գլխատե-  
ցին. իսկ, ինչպէս տեսնում էք, զլու-  
խըս վրաս է, և ես նստած եմ այստեղ։  
Ինչպէս պատահեց այս, կամ ինչով բա-  
ցատրել, ես էլ չեմ հասկանում։

— Է՞ն, աւելորդ է բացատրութիւն-  
ների յետեկց ընկնելը. այդ էլ հերիք է,  
որ դու ազատուել ես, և մենք ուրախ  
ենք, —ասացին ծանօթներս և, իրենց  
անվերջ գոհանակութիւնը յայտնելով  
դուքս եկան։

## VI

Հետեւալ օրն առաւօտեան իրճթու-  
մըն նստած՝ խորասուզուած ծանր մտած-  
մունքների մէջ, զրութիւնս պարզելու  
ձիգն էի գործ դնում։ Ախր ես կամաւոր  
էի զրուել, կեանքս վտանգի զրեվ ազա-  
տութիւն ծեռք բերելու համար, այն  
ազատութիւնը, որին իմ ամբողջ էու-  
թեամբ, իմ ամբողջ հոգով փափագել էի

անվերջ-երկար տարիների ընթացքում...  
իսկ աժմ... գեներալ կեապունօվը գերի  
տարուած զօրքի հետ, Սախալինը եապօ-  
նացիների ձեռքին, ամենաթեթև յան-  
ցանքների համար գլխատումն, դեռ երէկ  
իմ գլուխս էլ սպասում էր թրի հարուա-  
ծին, բոլոր բնակիչների դրութիւնն ան-  
որոշ տարտամ... Մտածելու առիթ  
իսկապէս ունէի:

Դառն խոհերիս միջոցին, փայտաշէն  
խրճիս դուռը մէկը ծեծեց:

— Համեցէք, —կանչեցի ես ու գլու-  
խը բարձրացրի:

Դուռը բացուեց և... ում տեսայ.  
հէնց այն ջահէլ օֆիցէրին, որ երէկ գե-  
ներալ Խարանկիչի մօտ էր և նրա աղիւ-  
տանան էր. հէնց այն օֆիցէրը, որ մի  
քանի օր առաջ մի ուրիշ եապօնական  
փնդապետի հետ ինձ մօտ էր մտել ու  
պատկերում գտնուող եապօնացի աշա-  
կերտներիս մասին հարց ու փորձ արել:  
Այդ օֆիցէրը դուքս դալու ժամանակ

ասել էր, թէ՝ մենք էլի կը պատահենք,  
և այժմ պատահում էինք. իհարկէ, նա  
բարի գործով չպիտի եկած լինէր, երկի  
ևս նորից մատնուած էի:

— Կարելի՞ է, —ասաց նա, գոնից  
ներս մտնելով:

— Համեցէք, —կրկնեցի ես, ներս  
հրաւիրելով:

Օֆիցէրը ներս մտաւ, բարեկց և,  
ժպտալով՝ դարձաւ ինձ:

— Է, այժմ էլ չէք ճանաչում այն  
պատկերը, որ անցեալ օրն այնպէս մո-  
ռացել էիք:

Նրա այդ խօսքերի վրայ կէս զար-  
մացած՝ նայեցի պատկերին, մէկ էլ օֆի-  
ցէրին և յանկարծ, կարծես, աչքերս նոր  
բացուեցին.

— Այս, Աղավա, այդ դժւռք էք,  
բացականչեցի ես, օֆիցէրին վարուելով:

Դա նա ինքն էր. այդ օֆիցէրը իմ  
նախկին աշակերտս էր, եապօնական այն  
վաճառականներից մէկը, որ Սախալինում

առևտուր էին անում, և որոնց հետ  
նկարուել էի:

— Եւ ինչպէս ձեզ չկարողացայ  
ճանաչել հէնց առաջին հայեացքից, — ձայն  
տուի ես, առաջին յուզմունքս անցնելուց  
յետոյ:

— Զգիտեմ, ճշմարիտ, — ասաց նա, —  
ես էլ էի զարմացել, թէ ինչու ուսուցիչս  
մոռացել է ինձ:

Սկսուեց մի սիրազեղ, սրտաբուղիս  
զրոյց, ես մոռացայ իմ կրած փոթորիկ-  
ները ու ցանկացայ տեղեկութիւններ  
իմանալ իմ միւս աշակերտներիս մասին:

— Իսկ որտեղ է կուբանեասին, —  
հարցրի նրան:

— Նա օֆիցէր է և այժմ էլ այս-  
տեղ է, Սախալինում գործող զօրաբաժ-  
նում:

— Մագաղիւրօն:  
— Նա էլ այսինչ գնդումն է օֆիցէր, —  
ասաց Աղավան, մի գնդի անուն տալով:  
Երա յետագայ պատասխաններից ես

իմացայ, որ աշակերտներիս մեծագոյն  
մասն, իբրև զինուորականներ, այժմ գտնւում  
են Սախալինի եապօնական բանակի գա-  
նազան զօրաբաժիններում:

Այդպէս ուրեմն. այն մանրավաճառ  
առևտուրականները, որ Ալեքսանդրօվսկիի  
պօստում ձկնի և այլ մանր-մունր ապրանք-  
ների առևտուով էին զբաղուած միշերկու-  
տարի սրանից առաջ, նրանք եապօնա-  
կան զինուորականներ էին եղել, որ  
առևտուրականի դիմակի տակ կղզին էին  
ուսոււմնասիրել իրա բոլոր մանրամասնու-  
թիւններով. մի ուսոււմնասիրութիւն, որ  
այնքան պէտք էր եկել այժմ և այնքան  
նշանաւոր ծառայութիւններ ցոյց տուել:  
Ահա թէ ինչով պէտք է բացատրել այն  
հանգամանքը, որ եապօնական զօրքն  
առանց սիսալուելու և ամենայն արա-  
գութեամբ անցնում էր այստեղ, որտեղ  
հրամանատարն էր ցանկանում:

— Բայց իմ զլուխս արդէն ուսերիս  
վրայ չպէտք է լինէր, այդ զիստէք, —

ասացի ես Ազավային, որոշ տեղեկութիւններ ստանալուց յետոյ:

— Ինչպէս, — հարցրեց նա:

— Եփը ես գլխատման էի դատապարտուել. իմ երկու ընկերներիս երէկ գլխատեցին, իսկ ես ազատ մնացի: Այդ բանը ես բացատրել չեմ կարողանում:

— Ռւղթում էք, ես բացատրեմ, — պատասխանեց Ազավան, ծիծառելով:

— Շնորհակալ կը լինեմ, եթէ բացատրէք:

— Զեր չգլխատուելը մի շատ հասարակ պատահականութիւնից եղաւ միայն. և եթէ չլինէր այդ պատահականութիւնը, մենք այժմ այսուղ միասին քաղցր զրոյց չէինք անի... երէկ դուք ինձ տեսաք գլխաւոր շտաբում, գեներալի մօտ:

— Այն, տեսայ, լիշում եմ, որ այնտեղ էք եղել, բայց, դժբախտաբար, չեմ ճանաչել:

— Եթէ լաւ պատկերացնում էք, ապա կ'իմանաք, որ շտաբի պատշգամբը նայում է այն հրապարակին, որտեղ գլխատումներն են կատարում մեծ մասամբ: Ես կանգնած պատշգամբին՝ ինձ համար նայում էի դէպի գուրսը, տեսնեմ՝ բերում են երեք կալանաւորներ՝ դէպի գլխատման տեղը: Որքան էլ զինուորական լինենք, որքան էլ արիւն տեսած, սովորած լինենք, այնուամենայնիւ մարդու սիրտը տանել չի կարողանում, երբ անպաշտպան մարդկանց բռնում, մորթում են անսասունի նման: Թէև այդպէս են պահանջում պատերազմական կանոններն, այնուամենայնիւ, դա զզուելի է, դա մարդկային խղճի դէմ է, և ես երեսս ուզում էի շրջել որպէսզի չտեսնեմ այդ: Բայց յանկարծ մնացի մեխուած. նրանց մէջ ես տեսայ ձեզ, իմ ուսուցչիս... իսկոյն հրամայեցի ձեզ ներս բերել գեներալի մօտ... Այնուհետեւ դուք գիտէք արդէն:

— Ո՞չ, չգիտեմ, պատմեցէք, ինողրեմ,  
—բացականչեցի ես, աչքերս յառելով  
խօսակցիս:

— Բայց չէ որ դուք այնտեղ էիք:  
— Այնտեղ էի, բայց այնպիսի յուշ-  
դուած դրութեան մէջ էի, որ ոչինչ չեմ  
հասկացել:

— Երբ ձեզ ներս բերան,—շարու-  
նակեց Ազավան,—ես մօտեցայ դեներա-  
լին և նըան զեկուցի, որ դուք տարի-  
ների ընթացքում մեր ուսուցիչն էք եղել  
որ ձեզ շատ լաւ ճանաչում ենք, քաղա-  
քական յանցաւոր էք և տաժանակրու-  
թեան էք ուղարկուել այս ինչ պատճառ-  
ներով և որ ձեր բանուելը թիւրիմա-  
ցութիւն է եղել: Այդ բոլորը լսելուց յե-  
տոյց, գեներալը հրամայեց իսկոյն բաց  
թողնել:

Իսկապէս՝ միայն մի չնչին պատա-  
հականութիւն ինձ փրկել էր: Ազավան  
կանգնած չլինէր պատշգամբի վրա, կամ  
մի վայրկեան շուտ երեսը շուռ տար,

ամեն ինչ վերջացած կը լինէր:

Դրանկեց յետոյ, իմ հարցասիրութեանս  
գոհացում տալու համար, Ազավան հա-  
մառօտակի ուրուագծեց ոռւսեապօնա-  
կան պատերազմը. նա պատմեց, թէ ինչ-  
պէս եապօնացիք իրար յետեկց գա-  
լիս, անցնում էին եալու, Լեաօնեան,  
Մուկդէն, Պօրտ-Արտուր, Յուսիմա, և  
այլն, և այլն, յաղթութիւնների մի ամ-  
բողջ շարք, և ոչ մի պարտութիւն... ես  
ընդումացած ականջ էի գնում ու գրեթէ  
չէի հաւատում, թէ հսկայ Ռուսաստանը  
իսկապէս յաղթուած է համեմատաբար  
թզուկ եապօնիայից: Միթէ նրա ոյժը  
երևակայական էր եղած: Բայց ես գիտէի  
ուռսական զօրքի քաջագործութիւնները,  
նրա հերոսութիւններն ամբողջ պատմու-  
թեան ընթացքում. նա միշտ յաղթող էր,  
միշտ հերոս: Ինչու էր այժմ յաղթուել:  
Ազավայի նկարագրութիւնից ես կարո-  
ղացայ այդ հարցը պարզել ինձ համար...  
մեղքը զինուորինը չէր. աւելի խորը

պէտք էր նայել...

Ազագան գնաց, նորից շեշտելով, որ  
պէտք եղած ժամանակը իրեն հանդիպեմ.  
Այսուհետեւ ես էլի պատահեցի մի քանի ան-  
գամ. նրա հետ կային և ուրիշները:  
Նրանք ինձ առաջարկեցին անցնել եա-  
պօնիա, գնալ նազասակի և այնտեղ,  
իրենց ուսումնարաններում, լինել ու-  
սաց լեզուի ուսուցիչ:

Ես երկդիմի պատասխան տուի,  
որովհետեւ իմ դրութիւնս դեռ պարզ չէր:  
16 տարիների ընթացքում ես հայրենիքս  
էի երազել և հոգով, սրտով դէպի  
այնտեղ էի ձգտում: Այժմ, Կայսերական  
հրովարտակի համաձայն, ես կամաւոր  
էի գրուել, մասնակցել կոփիներին, կո-  
մաւորների բոլոր պարտականութիւնները,  
իմ անմիջական իշխանաւորներիս ամեն  
հրամանները կատարել, և այժմ իրաւունք  
ունէի ազատ համարուելու, իրաւունք  
ունէի բաղձալի հայրենիքս վերադառնա-  
լու:

Բայց ով պէտք է տար ինձ այդ-  
իրաւունքը, ով պէտք է ինձ զինէր ամե-  
նակարող պաշտօնական թղթերով. ուու-  
սական ագմինիստրացիայից ոչ ոք չէր  
մնացել, իսկ եապօնացիք միայն տիրողներ  
էին... եւ ես որոշեցի չմերժել եապօնա-  
ցիներին դրականապէս ու միևնույն ժա-  
մանակ բոլոր միջոցները գործադրել՝  
հայրենիք վերադառնալու:

Պատերազմն ամենասուկալի հետե-  
ւանքներն ունեցաւ Սախալինի համար.  
Բնակչութեան ամենախոշոր մասը ոչնչա-  
ցաւ կամ պատերազմի ժամանակ՝ գնդակ-  
ներից, կամ պատերազմից յետոյ՝ սովոր,  
հիւանդութիւնից և բազմատեսակ այլ  
պատահարներից: Նրանց անտեսութիւնը  
միանգամայն ոչնչացաւ:

Կղզին տիրելուց յետոյ մի քանի  
ժամանակ անց՝ եապօնական կառավա-  
րութիւնը յայտնեց Սախալինում մնացած  
բոլոր ուսուահպատակ աքսորականներին ու  
ոչաքսորականներին, եթէ կային այդպի-

սիները, որ այժմ եապօնական իշխանութիւնն է կղզում, և ով ցանկանում է մնալ կղզու վրայ, նա այնպայման պէտք է ընդունէ եապօնահպատակութիւն, որին կը տրուին բոլոր այն իրաւունքները, որ պիսին վայելում են բուն եապօնացիք: Իսկ նրանք, որ այդ չեն ցանկանայ, ապա պէտք է թողնեն կղզին ու ենեն ռուսական հողը, որի համար կը տրուին եապօնական նաւեր:

Մայր-Յամաք... Հայրենիք տեսնելու սէրն այնպէս ուժեղ կերպով էր արմատաւորուել բոլոր աքսորականների մէջ, որ նրանց ամենամեծ մասը ցանկացաւ անցել Մայր-Յամաք: Եապօնացիք տուին նաւերը. աքսորականների բազմաթիւ խմբեր տեղաւորուեցին այնտեղ, ամեն ինչ թողնելով կղզու վրայ, որովհետեւ իրաւունք ունէին իրենց հետ տանելու այնքան, որքան մէջքով վերցնել կարող էին:

Այդ գնացողների վիճակը դառն էր.

դառն էր մանաւանդ իրա հետևանքներով: Ասիայի ափերը դուրս գալուց յետոյ, նրանք սոված, ծարաւ Ամուրի ձանապարհը բռնեցին և անտառների մէջ կամ սովամահ եղան, կամ գագանների կերակուր դարձան: Տասնեակ հազարաւոր գաղթողներից միայն 1000—1200 հոգի ազատուեցան. և նրանք էլ թերեւ ոչընչանային, եթէ Ռուս կառավարութեան ուղարկած օգնութիւնը չհասնէր, թէկուղ շատ ուշ:

Կղզին այդպիսով գրեթէ դադարկուեց բնակչութիւնից: Այսուհետեւ կարելի էր ամբողջ գիւղեր մասնել ու ոչինչ չտեսնել, բացի փայտեղին, դադարկ բնակարաններից: Փողոցներում ման էին գալիս ոսկրացած ընտանի կենդանիներ. ձին, որ աքսորականը տասնեակ տարիներով կոպէկ-կոպէկ խնայողութիւն էր անում և 100—150 ըուբլի տալիս, գնում, այժմ վիզը կախ, սոված՝ իւր օրերի վերջին էր սպասում. 200 ըուբլիանոց կովերը սովից:

քառաջում էին... Ո՞վ էր տէրութիւն  
անողը, ում էր պէտք. կամ դիցուք մէկը  
հաւաքեց մի տասը, քսան հատ, ինչնվ  
պէտք է կերակրէր...

Այդ գրութեան մէջ էր կղզին, որ  
ես մի տալ ճարեցի և, կինս, երեխա-  
ներս այնտեղ նստեցնելով՝ գուրս եկայ  
Ռիկօվսկից դէպի Ալէքսանդրօվսկիյ պօստ,  
տեսնելու, թէ այնուհետեւ պայմաններն  
ինչ ճանապարհ ցոյց կը տան ինձ մօտիկ  
ապագայում:

Չերկարացնեմ, թէ ճանապարհն ինչ-  
պիսի՝ նեղութիւններով անցայ և թէ  
ինչքան ցնցող դէպքեր պատահեցին. մի-  
այն այսքանս տաեմ, որ մի կերպ եկայ,  
հասայ Ալէքսանդրօվսկիյ պօստ, որտեղ  
տունս եապօնացի օֆիցէրների ձեռքում  
գտայ. Դուրսը մնալ ինարկէ, չէի կա-  
րող, և երկար դիմումներից յետոյ նրանք  
մի սենեակ ազատեցին ինձ համար:

Բոլոր նշանները ցոյց էին տալիս,  
որ, ուզենայի, չուզենայի, մի առ ժա-

մանակ, գուցէ ամիսներ, գուցէ նոյն իսկ  
մի տարի էլի մնամ Սախալինում, թէն  
մի քանի թղթեր արդէն կարողացէլ էի  
մի կերպ ձեռք զցել որոնց հիման վրայ  
կարող էի իբրև ազատ քաղաքացի՝ վերա-  
դանալ Ռուսաստան:

Այդ միջոցներում, կարծեմ, նոյեմ-  
բերի վերջերին, Սախալին եկաւ գեներալ  
Վալուեվ և յայտարարեց կենդանի մնա-  
ցած սախալինցիներին, որ հոկտեմբերի  
17-ին Բարձրագոյն Մանիքէստ է եղել  
ժողովրդին արուել են ամեն տեսակ  
ազատութիւններ, և կղզին, որի հիւսի-  
սային մասը մնում է ոռւսաց ձեռքին,  
այլև ոչ թէ աքսորավայր պէտք է լինի,  
այլ մի ազատ նահանգ, ինչպէս ոռւսա-  
կան բոլոր նահանգները, նրանց յատկա-  
ցրած բոլոր օրէնքներով:

Այժմ արդէն ես կրկնակի ազատ  
էի՝ կամաւորութեամբս և Բարձրագոյն  
Մանիքէստով: Եապօնիս գնալու մասին  
էլ մտածելու տեղիք չունէի և ոիրու ի

Թինդ սպասում էի ծովերը բացուելուն,  
Ռուսաստան անցնելու համար։

Եւ վերջապէս եկաւ, հասաւ այդ  
բաղձալի ըովէն... Սառոյցը հալուեց,  
ծովերը բացուեցան, և դրա հետ բա-  
ցուեցաւ իմ նոր կեանքիս նոր դարունը...

Տամուվեց և կէս տարուայ տաժա-  
նելի կեանքս իւր բոլոր տանջանքներով  
ու դառնութիւններով Սախալինին յան-  
ձնելով՝ 1906 թուի յունիս ամսին ես  
սոս շոգենաւում դրի, և դա ամենավսեմ,  
ամենավեհ ըովէներից մէկն էր իմ կեան-  
քում...

Ես հայրենիք էի վերադառնում...



Տպարան

# Շահրապետակի.

Բագու, Միլիսինսկայեա գոռ.

Կատարւում են տպարանական ամեն տեսակ զօրծեր ոռուսերեն, տեղային եւ եւրոպական լեզուներով.

Պարբերական հրատարակութիւններ, գրքեր, քոչիւններ, պրեսուրանուսներ, հանդիներ, օբյակնուսներ, նախակերպութեաններ, առաջային եւ այլ նիմոնակութիւնների, առևտուումն, արդինարեւուանն եւ այլ գոտանեակների համար բանեներ, մատուններ եւ ձաւեներ, աճեւններ, ազգեր, յայտարարութիւններ եւ այլն, և այլն:

Դները մաշելի են, զործը՝  
մամուր, բարեխսիզ եւ ժամանակին:

1

ՀՀ Ազգային գրադարա



NL0418872

